



«Տ-Մետալ» ՓԲԸ-ի՝ մետաղների վերամշակման և արտադրության

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Լրամշակում)

Ձեռնարկող՝ «Տ-Մետալ» ՓԲԸ

*[Handwritten signature]*



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	4
2. Հավելվածներ.....	4
3. Օգտագործվող հապավումներ.....	5
4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ/ հաշվետվության կազմման իրավական հիմքերը.....	5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	7
6. Գործընթացի մասնակիցները.....	8
7. Տեղակայման տարածքի և նախատեսվող գործունեության բնութագրերը.....	9
8. Շրջակա միջավայրի բնութագրերը.....	13
8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	13
8.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները.....	14
8.3. Սելսմիկա և երկրաբանություն.....	15
8.4. Կլիմա և օդային ավազան.....	15
8.5. Հողային ռեսուրսներ.....	21
8.6. Ջրային ռեսուրսներ.....	22
8.7. Կենսաբազմազանություն.....	24
8.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	28
8.9. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	29
8.10. Սոցիալ-տնտեսական.....	31
9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (գրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը:.....	33
10. Նախատեսվող գործունեության բնութագրերը, տեխնիկական - տեխնոլոգիական լուծումները.....	35
10.1 Տարածքի նախապատրաստական աշխատանքների նկարագիրը.....	35
10.2 Արտադրական հզորություններ և տեխնոլոգիական բնութագրերը.....	36
11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը.....	42
11.1 Օդային ավազան.....	43
11.2 Հողային ռեսուրսներ.....	46
11.3 Ջրային ռեսուրսներ.....	46
11.4 Կենսաբազմազանություն.....	48
11.5 Թափոններ.....	48
11.6 Արտակարգ իրավիճակներ և անվտանգություն.....	52
11.7 Աղմուկ և թրթռում.....	52
11.8 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.....	53
11.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	53
11.10 Գումարային ազդեցություններ.....	53

12. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում.....	55
13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը .....	57
13.1 Օդային ավազան .....	58
13.2 Հողային ռեսուրսներ .....	58
13.3 Ջրային ռեսուրսներ.....	59
13.4 Կենսաբազմազանություն .....	59
13.5 Թափոններ .....	60
13.6 Աղմուկ և թրթռում .....	60
13.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	61
13.8 Արտակարգ իրավիճակներ .....	61
13.9 Էներգախնայողության և էներգաարդյունավետության.....	62
13.10 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.....	62
13.11 Սոցիալական .....	64
13.12 Կանաչապատում .....	65
14. Մոնիթորինգ.....	65
15. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ .....	66
16. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական կառավարման միջոցառումների նախագիծ.....	67
17. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	79
18. Հետնախագծային վերլուծություն .....	82
19. Բողոքների ընթացակարգ .....	82
20. Հանրային քննարկումներ.....	82
Օգտագործված գրականություն .....	84

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքում՝ մետաղների վերամշակում և արտադրություն
Ձեռնարկող	«Տ-Մետալ» ՓԲԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք.Հրազդան Գործարանային 1
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	Ք.Հրազդան Գործարանային 1
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	<narek.mkhitaryan8855@gmail.com>, 094509450
Պատվիրատու	«Տ-Մետալ» ՓԲԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	ՀՀ Կոտայքի մարզ, ք.Հրազդան
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /ՇՄԱԳ/ նախագծող	«Նովալ» ՍՊԸ
ՇՄԱԳ մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	ք.Երևան, Իսահակյան 18, (093) 39-77-60 <a href="mailto:noval-llc@outlook.com">noval-llc@outlook.com</a>

## 2. Հավելվածներ

- Հավելված 1. Տարածքի վարձակալության պայմանագիրը
- Հավելված 2. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի հուշարձանների ցանկը
- Հավելված 3. Ջրամատակարարման և ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, աղբահեռացման վերաբերյալ գրությունը
- Հավելված 4. Համայնքի նախնական համաձայնությունը
- Հավելված 5. «Տ- Մետալ» ՓԲԸ-ի տարածքի բեկման կետերի կոորդինատները WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով
- Հավելված 6. Սարքավորման տեխնիկական տվյալները և անձնագիրը
- Հավելված 7. Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն, մասնակիցների ցանկ
- Հավելված 8. Տեխնիկական առաջադրանք
- Հավելված 9. Պետ. ռեգիստրի քաղվածք
- Հավելված 10. Պետական վճարման անդորրագիրը
- Հավելված 11. Օդային ավազան արտանետումների ցրման հաշվարկ՝ Էկոլոգ 4.6 ծրագրով:
- Հավելված 12. Առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթ:

### 3. Օգտագործվող հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
- ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ՍԹԿ՝ Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
- ՄՈՒՅ(ՊՇԼՍ)՝ պողպատի շարունակական ձուլման մեքենա (LF 25) AKP – շերտի վառարանային կայանք
- ԵԱԲ 25՝ աղեղային պողպատածուլակական վառարան:

### 4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության կազմման իրավական հիմքերը

4.1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)-կարգավորում է հիմնադրությամբ փաստաթղթի(ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեության(ՇՄԱԳ) իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի՝ իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

4.2. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում:

4.3. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.) -սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

4.4 «Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.)-սահմանում է Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության հիմնադրույթների սահմանումը, հուշարձանների պետական հաշվառման, պահպանությունը, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման հարցերի կանոնակարգման սկզբունքները:

4.5 «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը:

4.6 «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

4.7 «ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.)-սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպարարական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4.8. «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

### ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ ՀՀ կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» N385-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցետրացիաների-ՄԹԿ) նորմատիվների վերաբերյալ» 160-Ն որոշում :
- ❖ ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասագերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում:
- ❖ ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 25-ի «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին թիվ 91-Ն որոշում:

## **Միջազգային համաձայնագրեր**

- 4.8. ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.):
- 4.9. Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001):
- 4.10. Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999):
- 4.11. Վտանգավոր թափոնների տեղափոխման մասին Բազելյան կոնվենցիա:
- 4.12. Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիա:
- 4.13. Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001):
- 4.14. Էլեկտրոնային և էլեկտրատեխնիկական սարքավորումների թափոնների գործածության ոլորտում ԱՊՀ մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիր:
- 4.15. ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս1998թ.):
- 4.16. «Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.):
- 4.17. «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.):

## **5.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետությունում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Համաձայն այս օրենքի՝ նախատեսվող գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ հնարավոր բացասական ազդեցությունները՝ նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված:

Նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի, 1-ին մասի 7-րդ կետի՝ ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Նախատեսվող գործունեությունը՝ մետաղների վերամշակում և արտադրությունը, համաձայն՝ Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 5)-րդ կետի, բ. ենթակետի դասվում է Ա կատեգորիայի գործունեությունների ցանկին: Այն ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության երկու փուլով՝ նախնական և հիմնական:

Ընկերությունը նախատեսվող գործունեության նախնական փուլի՝ հայտի փորձաքննության արդյունքում, 01.11.2022թ. ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության տեխնիկական առաջադրանք (ՏԱ՝ 79)՝ համաձայն՝ Օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետի: Տեխնիկական առաջադրանքը՝ Հավելված 8:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը (ՇՄԱԳ հաշվետվություն) կազմվել է Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասին և տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Համաձայն 2005թ. հոկտեմբերի 24-ի «Տեխնիկական անվտանգության ապահովման Պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի «Նախքան արտադրական վտանգավոր օբյեկտի գործարկումը (վերագործարկումը) փորձագիտական եզրակացությամբ պետք է հավաստված լինի օբյեկտի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին»:

Նշված եզրակացությունը Օրենքով սահմանված կարգով կստացվի մինչև գործունեության գործարկումը:

## 6. Գործընթացի մասնակիցները

**Ձեռնարկող.** «Տ-Մետալ» ՓԲ ընկերություն, որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքում, Գործարանային 1 հասցեում Հրազդանի ՋԷԿ-ի տարածքում, վարձակալական հիմունքներով: Հավելված 1

Նախատեսվող գործունեությունը՝ հեղուկ պողպատի արտադրության գործարան է, որի նպատակն է սև մետաղների վերամշակմամբ ստանալ հեղուկ պողպատ և շարունակական պողպատի ձուլման մեքենայում (МНЛЗ) ձուլելով առաջին փուլում ստանալ ձուլածոներ, և երկրորդ փուլում գլանաձողեր (ամրաններ)՝ շինարարությունում օգտագործելու համար:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է համապատասխան օրենքների, կանոնակարգերի և ստանդարտների պահանջների, անհրաժեշտ թույլտվությունների և / կամ համաձայնությունների հիման վրա, ապահովելով բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի միջոցառումների, ինչպես նաև առողջության և անվտանգության պահանջների պահպանումը:

**Շրջակա միջավայրի նախարարություն.** Շրջակա միջավայրի նախարարությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմանում իրականացնում է շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաև բնական պաշարների ողջամիտ օգտագործման ու վերականգնման պետական քաղաքականության ձևավորումն ու կառավարումը:



Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով: Նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարման հիմնարկ ստեղծելու և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 8 օգոստոսի 2002 թվականի N 1237-Ն որոշմամբ:

ՇՄՆ իրականացնում է գործառույթների առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

Նախատեսվող գործունեության բնապահպանական փորձաքննության ընթացակարգը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, գործընթացում ներգրավվում են նաև ՇՄՆ-ի առանձնացված ստորաբաժանումները:

**Առողջապահության նախարարություն.** Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է առողջապահության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

**Արտակարգ իրավիճակների նախարարություն.** Հայաստանի Հանրապետության Արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատվել են «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի N 740-Լ որոշմամբ: Նախարարությունն իր պարտականությունները կատարում է աշխատակազմի և առանձնացված ստորաբաժանումների միջոցով:

**Հրազդան համայնք, շահագրգիռ հանրություն:** Հրազդան քաղաքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի վարչական տարածքում, որը տեղակայված է Հրազդան ՋԷԿ-ի տարածքում՝ Գործարանային 1 հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման՝ Հրազդան համայնքում իրականացվելու են չորս փուլով հանրային քննարկումներ, որոնցից երեքն արդեն իրականացվել են:

## **7. Տեղակայման տարածքի և նախատեսվող գործունեության բնութագրերը**

**Տեղակայման տարածքը:** Արտադրությունը նախատեսվում է իրականացնել «Հրազդան ՋԷԿ»ԲԲԸ-ի տարածքում: Տարածքը երկար տարիներ օգտագործվել է, որպես Հրազդանի էլեկտրակայանի տարածք, բավականին հեռու է բնակավայրերից և այլ շինություններից:


Նախատեսվող գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերական է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների:


Գործունեության ենթակա տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 17 938,8 քառ.մ.,

բոլոր ներկառուցված և պահեստային տարածքները կտեղակայվեն այս տարածքում՝ նախագծին համապատասխան: Համաձայն անշարժ գույքի վարձակալության պայմանագրի՝ Հավելված 1 վարձակալությամբ վերցվել է 108726,5 քառ. մ տարածք, որից սույն նախատեսված գործունեության իրականացման համար օգտագործվելու է 17 938,8 քառ.մ տարածքը, մնացած տարածքում դեռևս որևէ գործունեության իրականացում չի նախատեսվում:

**Սանիտարապաշտպանիչ գոտի.** Համաձայն 245-71 արտադրական ձեռնարկությունների սանիտարական նորմերի՝ արտադրամասը դասվում է II դասի ձեռնարկությունների կարգին, որի համար սանիտարապաշտպանիչ գոտին արտանետման աղբյուրից սահմանված է 500 մետր, ինչն ապահովված է: Գործարանի տարածքը մոտակա բնակելի տներից գտնվում է մոտ **1,2 կմ**, մոտակա հասարակական շինությունից՝ 700մ, բնակավայրի հողերից՝ 900մ, Ծաղկաձոր քաղաքից՝ 4,8կմ, Աղավնաձորից՝ 4,3կմ, Հրազդան գետից՝ 800մ, Հրազդանի ՋԷԿ-ից՝ **մոտ 675-մ** հեռավորությունների վրա:

Գծապատկեր 1.





Նախատեսվող գործունեությունը՝ հեղուկ պողպատի արտադրության գործարան է, որի նպատակն է սև մետաղների վերամշակմամբ ստանալ հեղուկ պողպատ և շարունակական պողպատի ձուլման մեքենայում (ՄՄՄՅ) ձուլելով առաջին փուլում ստանալ ձուլածոներ, և երկրորդ փուլում զլանածոներ (ամրաններ)՝ շինարարությունում օգտագործելու համար:

Ընկերությունը սև մետաղները հավաքելու է Հայաստանի Հանրապետության տարածքից թափոնի տեսքով, մատակարար կազմակերպություններից կամ ֆիզիկական անձանցից, հետագայում կարող են ներկրվել նաև արտերկրից: Բոլոր սարքավորումները լինելու են իտալական արտադրության կամ այլ եվրոպական արտադրության:

Գործարանի տարեկան արտադրողականությունը կազմելու է 150 000 տոննա հեղուկ պողպատ:

1-ին փուլում արտադրվելու է ձուլակտորներ, որը սպառվելու է, արտերկրում և ներքին շուկայում: 2-րդ փուլում արտադրվելու է բարձրորակ ամրաններ՝ АТ500С և բարձր մակնիշի, որը սպառվելու է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում:

Սկար 1.



Գործունեության տարածքում էկզոգեն երկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, փլուզումները, սողանքները, քարաթափությունը, սուֆոզիան և այլն բացակայում են: Տարածքում բացակայում են մակերևութային ջրային ռեսուրսները:

Տարածքում արդեն իրականացվել էին նախապատրաստական աշխատանքներ, կատարվել են սարքավորումների ապամոնտաժում, տարածքի կարգաբերում դատարկում, մաքրում: Մինչև նախատեսվող գործունեության սկսելն՝ ամբողջ տարածքը մանրամասն

կենթարկվի տեխնիկական աուդիտի: Կիրականացվի տարածք մտնող երկաթուղային գծերի կապիտալ վերանորոգում:

Կնախապատրաստվի արտադրական հրապարակը, շինհրապարակը, կկատարվեն տարածքի պլանավորման և ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, տարածքում կառանձնացվի մետաղի ջարդոնի կուտակման և պահեստավորման տարածք՝ հարթակ:

Արտադրական տարածքը պարսպապատված է:

ՋԷԿ-ի ընդհանուր տարածքում առկա է մոտ 100 հա կանաչ գոտի՝ տարածաշրջանին բնորոշ ծառափային բուսականությամբ:


## **8. Շրջակա միջավայրի բնութագրերը**

### **8.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.**

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900- 2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանը, ինչպես նաև Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արեւելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին:

Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը:

Կոտայքի մարզի բնական պայմաններն ու հարստությունները բազմազան են: Մարզի տարածքն աչքի է ընկնում բարձր լեռնագագաթներով ու խորը կիրճերով, լայնարձակ գետահովիտներով ու մեղմաթեք սարավանդներով, լավաների մեջ գոյացած բազալտե սյունաձև առանձնացումներով՝ անձեռակերտ բազմանիստ պրիզմաների տեսքով:



Հրազդան գետի ձախափնյա հատվածն իրենից ներկայացնում է Գեղամա զանգվածից հոսող լավային հոսքերից առաջացած սարահարթ՝ ծածկված տարբեր բարձրության բլուրներով:

## 8.2. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Տարածաշրջանի աշխարհագրական դիրքն ընդհանուր առմամբ նպաստավոր է: Մարզում Գեղամա լեռները կազմող հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերի աղբյուրների տեսքով դուրս են գալիս լեռների ստորոտներում, ինչպես նաև Հրազդան և Ազատ գետերի կիրճերում, որոնցից են Քառասունակնի, Արզնիի և Գառնիի աղբյուրները: Հրազդան և Ազատ գետերի կիրճերի առանձին հատվածներում առկա են բնական հիանալի հուշարձաններ:

Կոտայքի մարզում են գտնվում Արզնի և Հանքավան առողջարանները (հանքային աղբյուրների մոտ), Մարմարիկի առողջարանային գոտին՝ բազմաթիվ հանգստի ու առողջարանական ճամբարներով, Ծաղկաձորը՝ մարզական օլիմպիական համալիրով:


Հրազդանի քաղաքային համայնքի տարածքը գտնվում է Սևանի ֆիզիկաաշխարհագրական շրջանի Մարմարիկ-Հրազդանի լեռնատափաստանային, լեռնաանտառային ենթաշրջանում, Արարատյան գոգավորության նախալեռնային ենթաշրջանի հարևանությամբ՝ կրելով նաև այդ ենթաշրջանի կլիմայական ազդեցությունը:

Հրազդան քաղաքը տեղակայված է Հրազդան գետի վերին և միջին ավազանում՝ Փամբակի, Ծաղկունյաց և Գեղամա լեռնաշղթաներով՝ պատված թույլ մասնատված լավային ծածկույթով: Միջբլուրային տարածքները ծածկված են դելուվիալ ապարների շերտով: Տարածքի մեծ մասն ունի 1500-2400 մ բարձրություն: Առավելագույն բարձր կետը Թեժ լեռան կատարն է՝ 3101մ: Հյուսիսում ձգվում են Մարմարիկի վտակներով խիստ մասնատված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, արևելքում՝ Գեղամա լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Հարավ-արևելքում բարձրանում են Գուրանասար, Մենակսար հրաբխային կոները:

### 8.3. Սեյսմիկա և երկրաբանություն


Տարածաշրջանի և Հրազդան քաղաքի ինժեներատեղեկագրական պայմանները բարենպաստ են: Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին-կավիճ, միջին-միոցենի հասակի մետամորֆիզացված բյուրեղացված թերթաքարերը, մարմարային ապարները, չորրորդական հասակի անդեզիտաբազալտներով և անդեզիտադաջիտներով լավաները՝ ծածկված կրաքարերով, նստվածքային և հրաբխային ապարներով, ավազային և խոշորաբեկորային գրունտներով:

**Շրջանի սեյսմիկ պայմանները.** համաձայն ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի նորմատիվային փաստաթղթի՝ ըստ սեյսմիկ հատկության տարածաշրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max}=0.4g$  արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:



### 8.4. Կլիմա և օդային ավազան

Նախատեսվող գործունեության տարածքի կլիմայական պայմանները ներկայացված են՝ ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի: Ըստ այդ փաստաթղթի կլիմայական բնութագրի՝ Հրազդան քաղաքը գտնվում է ցուրտ կլիմայական շրջանում՝ ծովի մակերևույթից 1765մ բարձրության վրա: Ամառը զով է, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0- 6.0 մ/վ: Ձմեռը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին տատանվում է մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը կազմում է 5.0-7.0 մ/վ:



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Հրազդան քաղաքում ձմեռը երկարատև է, խորը և կայուն ձյան շերտով, նվազագույն ջերմաստիճանը հասնում է մինչև  $-32^{\circ}\text{C}$ : Գարունը երկարատև է, զով և խոնավ: Ամառը չափավոր տաք է, առավելագույն ջերմաստիճանը՝  $35^{\circ}\text{C}$ : Տեղումների տարեկան քանակը հասնում է միջինը՝ 688մմ-ի: Ուժեղ քամիներով օրերի թիվը հասնում է 18-ի: Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 19մ/վ է, 50 տարվա ընթացքում 22մ/վ: Անարև օրերի քանակը տարեկան կազմում է 30 օր: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 92սմ:



Աղյուսակի տեսքով ներկայացվում են մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Հրազդանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1.

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Ք.Հրազդան	1765	-8.0	-6.4	-2	5	10.1	13.8	17.2	17.2	13.5	7.5	1.3	-5	5.4	-32	35

Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %												Միջին տարեկան, %	Միջին ամսական, ժամը 15-ին	
	Ըստ ամիսների													Ամենացուրտ ամսվա, %	Ամենատաք ամսվա, %
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII			
Ք.Հրազդան	81	78	74	70	69	69	67	64	64	69	76	79	72	69	46

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը -----, մմ օրական առավելագույն												Ձնածածկույթ			
	Ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասն օրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Ք. Հրազդան	45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46	688	132	129	310
	40	47	44	52	52	42	48	42	49	64	45	34	64			

Քամի

Աղյուսակ 4




Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների								Անհող մությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությանը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, մ/վ												25	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	823,2	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1,9	2,1	18	19	22	24
			2,3	2,4	2,0	1,4	1,9	2,3	2,4	1,7							
		ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2,1					
			2,3	2,7	2,2	1,8	1,9	2,3	2,4	2,0							
		հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2,8					
			3,5	3,2	2,9	1,9	2,0	1,9	2,4	2,2							
հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1,7							
	2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0									

**Օդային ավազանի բնութագիրը.** Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Հրազդան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 17 շարժական դիտակետ և 1 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր ( www.armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ: Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2022 թվականի 4-րդ եռամսյակում կազմակերպության կողմից դիտարկումներ են կատարվել նաև Հրազդան քաղաքում:



Համաձայն կազմակերպության էլեկտրոնային կայք էջի՝ դեկտեմբեր ամսվա միջին ամսական կոնցենտրացիաների՝ փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի գտնվում են հետևյալ սահմաններում.

- փոշին՝ 0,15 մգ/մ<sup>3</sup> -ից բարձր (ՄԹԿ՝ 0,10մգ/մ<sup>3</sup>),
- ծծմբի երկօքսիդը՝ 0,02-ից ցածր (ՄԹԿ՝ 0,05մգ/մ<sup>3</sup>),
- ազոտի երկօքսիդը՝ 0,02մգ/մ<sup>3</sup> -ից բարձր մինչև 0,03 սահմաններում (ՄԹԿ՝ 0,04մգ/մ<sup>3</sup>):

Հրագրան քաղաքում 2022թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ օդային ավազան փոշու արտանետումները գերազանցել են ՄԹԿ միջին կոնցենտրացիան՝ 1,6 անգամ, իսկ ազոտի և ծծմբի երկօքսիդների արտանետումները գտնվում են ՄԹԿ նորմերի սահմաններում:

### 8.5. Հողային ռեսուրսներ

Կոտայքի մարզն աչքի է ընկնում իր խայտաբղետ հողաբուսական ծածկույթով: Այստեղ հիմնականում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն, իսկ բարձրադիր վայրերում տարածված են ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, սարավանդային հատվածներում՝ շագանակագույն հողերը և չոր տափաստանային լանդշաֆտները: Լեռնալանջերի սևահողային ծածկույթի վրա ձևավորվել են լեռնային տափաստանները: Ծաղկունյաց լեռների և Մարմարիկի հովտի անտառների տակ տարածված են գորշ դարչնագույն հողերը, իսկ բարձրադիր լեռնային գոտում՝ լեռնամարգագետնային լանդշաֆտը: Բարձրադիր մասերում տարածված են խոտհարքներն ու ամառային արոտավայրեր:

Նկար 4



ИТОМ, ВЫ СОГЛАСАЕТЕСЬ С НИХ ИСПОЛЬЗОВАНИЕМ.  
ՀՀԿԵՆՏՐ

Հրազդանի տարածաշրջանին բնորոշ են դարչնագույն անտառային հողերը՝ հզոր պրոֆիլով, խորը և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնների զգալի հումուսացվածությամբ(5-8%), կլանման մեծ ծավալով: Հրազդան գետի առափնյա հատվածներում ներկայացված են միջին հզորության(50-80սմ) լեռնային սևահողերով:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Բուն գործունեության վայրում հողային ֆոնդը ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, քանի որ նախկինում և այժմ տարածքը արդյունաբերական գոտի:

Համաձայն Գլխավոր ( [www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am)) էլեկտրոնային էջի՝ 2022 թվականի 2-րդ եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են իրականացվել նաև Կոտայքի մարզում: Ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.5-2.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 17.0-46.3 անգամ, ցինկի պարունակությունը՝ 5.1-12.7 անգամ, քրոմի պարունակությունը՝ 4.3-26.7 անգամ, նիկելի պարունակությունը՝ 9.3-28.0 անգամ, կապարի պարունակությունը՝ 1.3-2.1 անգամ և արսենի պարունակությունը՝ 2.5-10.0 անգամ:


### **8.6.Ջրային ռեսուրսներ**

Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքն (ՋԿՏ) ընդգրկում է 2 հիմնական ջրավազաններ՝ Հրազդան և Քասախ: Հրազդանի ՋԿՏ-ում ընդգրկված են 10 կմ և ավել երկարությամբ 20 գետեր, 1մլն մ<sup>3</sup> և ավելի ծավալով 9 ջրամբարներ, բնական լճեր՝ Քարի և Ակնա, ինչպես նաև 7 առաջնային, 4 դերիվացիոն և 7 երկրորդային ջրանցքներ: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Գետառ, Ազատ գետերը: Այստեղ է գտնվում 3032մ բարձրության վրա գտնվող Ակնա լիճը: Գետի և լճի ջրերը մարզում օգտագործվում են ոռոգման նպատակով:

Հրազդանի տարածաշրջանում է գտնվում Հանքավանի ջրամբարը:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

Հրազդանի ջրավազանի համար ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 նմուշառման կետերում՝ մակերևութային ջրերի և 8 կետերում՝ ստորերկրյա ջրերի համար:




Տարածքի խոշորագույն ջրային ռեսուրսը Սևանա լճից սկիզբ առնող և Արաքս գետի ձախ վտակ՝ Հրազդան գետն է: Գետն ունի 141կմ երկարություն, ավազանի մակերեսը կազմում է 2650կմ<sup>2</sup> է (առանց Սևանա լճի), սնունը կատարվում է հիմնականում ստորգետնյա(51%) և հալոցքային(37%) ջրերի հաշվին: Գետն աչքի ընկնում գարնանային վարարումներով և հորդացումներով՝ ամռանն ու աշնանը:

Մարմարիկ գետն իր վտակներով հանդիսանում է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մաս:

Ջրային ավազաններն աղտոտման են ենթարկվում մարդու գործունեության հետևանքով, ինչպես նաև տեղումների միջոցով անջատվող աղտոտող նյութերի միջոցով, առաջացնելով ջրավազանների կենսաբազմազանության, որակական կազմի, ջերմային, ռեժիմի փոփոխություններ: Հայաստանի Հանրապետությունում ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման: ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մոնիթորինգի տվյալների համաձայն՝ կենսածին նյութերի՝ ամոնիում և ֆոսֆատ իոնների կոնցենտրացիաները բարձր են Հրազդան, Ծաղկաձոր և Քասախ գետերի միջին և ստորին հոսանքներում՝ գետերի ջրի մեջ կենցաղային կեղտաջրերի հեռացման հետևանքով: Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է

«վատ» (5րդ դաս): Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Համաձայն Գլխավոր ( www.armmonitring.am) էլեկտրոնային էջի՝ 2022թ. նոյեմբեր ամսվա ընթացքում Հրազդան գետում աղտոտվածության ցուցանիշները (մգN/l)՝ ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաները հիմնականում գերազանցում են 2-րդ դասի ջրերի որակական նորմերի ցուցանիշները:

**Գծապատկեր 56. Հրազդան գետում ամռնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները**




**Հիդրոերկրաբանական տեսակետից.** Համայնքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բ արենպաստ են, բայց որոշակի բարդություն են առաջացնում կապված՝ երկրաբանական կառուցվածքի, ապարների լիթոլոգիական կազմի, ռելիեֆի և կլիմայի հետ: Գրունտային ջրերը(շերտային) կապված են դելյուվիալ-պրոյուվիալ և այուվիալ-պրոյուվիալ նստվածքների հետ: Ջրային հոսքերը՝ պայմանավորված կավաավային, խճային ապարների, լավային հոսքերի ջրառատությամբ, ձևավորում են բազմաթիվ տարբեր դեբիտային էլքերով ջրային էլքեր՝ աղբյուրների տեսքով:

Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ գարնանը դուրս են ցայտում՝ «40 աղբյուր» անվանումով:

**8.7. Կենսաբազմազանություն**

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, որտեղ լանդշաֆտները և էկոհամակարգերը կազմում են բարդ բազմաֆունկցիոնալ համակարգ, որոնք նպաստում են հարուստ և ինքնատիպ կենսաբազմազանության ձևավորմանը: Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հիմնական կենսատիպերի աշխարհագրական տեղաբաշխումը պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ ու տարածքի տոպոգրաֆիական բազմազանությամբ, որի շնորհիվ յուրաքանչյուր գոտու կենսաբազմազանությունը բնորոշվում է իր տեսակային կազմով, որակական ու քանակական ցուցանիշներով: Հանդիսանում է նաև միգրացվող կենդանիների և չվող թռչունների տարանցիկ ճանապարհների խաչմերուկ:





Նախատեսվող գործունեության տարածաշրջանը գտնվում է չոր լեռնատափաստանային և օշինդրա-կիսանապատային գոտում, իսկ Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների ձախափնյա լանջերին բնորոշ է լեռնատափաստանային լանդշաֆտային գոտին: Մարզն ունի հարուստ և բազմատեսակ բուսականություն, որը պատկանում է Ապարանի ֆլորիստիկ շրջանին: Ամենատարածված բուսատեսակը կաղնին է, առանձին հատվածներում կաղնուտների տեսքով:

Տարածաշրջանին բնորոշ են ռեկրացիոն-բնապահպանական նշանակության անտառները:

Տարածաշրջանում տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան տափաստանային, նոսրանտառային, անտառային և մարգագետնային բուսականության տիպերով և վերջիններիս բնորոշ կենդանական աշխարհով:

**Բուսական աշխարհ.** Հրազդանի և հարակից տարածքների անտառային էկոհամակարգերին բնորոշ են կաղնուտային, բոխուտային լայնատերև խառը անտառները ու հետանտառային նոսրաանտառները: Այստեղ աճում են Կաղնի խոշորառեղը (*Quercus macranthera*), բոխի (*Carpinus betulus*), բոխու տեսակներ (*Aser campestre*, *Aser trautvetteri*), արնուենի (*Sorbus umbelata*) և այլ՝ հացենի, թխկի, լորենի, սոճի, թեղի, պլոճենի, մասրենի,

հաղարջենի, ազնվամորի և այլ ծառաթփային բուսատեսակներ: Քաղաքին հարակից անտառներում հանդիպում են նաև վայրի տանձենի (*Pyrus sp.*, *P. georgica*, *P. communis*) և խնձորենի (*Malus silvestres*): Կանաչապատ տարածքներում հանդիպում են եղևնի, նոճի, արևմտյան գհիի, կենսածառ արևելյան, սպիտակ/ լացող ուռենիներ, հացենի, լորենի: Թփուտներից տարածված են յասամանը, հաղարջը, նեղտերև փշատենի և այլն: Փամբակի և Ծաղկունյաց լեռների լանջերին տարածված են թխկու, կաղնու, արոսենու անտառները:

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում լեռնատափաստանային տարախոտեր են, հացազգիների գերակշռությամբ՝ ոզնախոտ(*Dactylis Woronovii*), սեզ տափաստանային (*Phleum phleoides*), դաշտավուկ սոխուկավոր (*Poa bulbosa*), կելերիա սանրաձև (*Koeleris cristata*), ցորնուկ ցգամազ (*Bromus squarrosus*), շյուղախոտ ակոսավոր (*Festuca sulcata*), մերձալպյան բարձրախոտերից՝ իշառվույտ նեպոլիտական (*Melilotus neapolitanus*), եղինջ երկտուն (*Urtica dioica*), ծվծվուկ կտրտված (*Silene multifida*) և այլն:

Նկար 7



Կոտայքի մարզում աճում են 54 տեսակի բույսեր, որոք գրանցված են ՀՀ բույսերի Կարմիր գրքում: Կոտայքի մարզի և տարածաշրջանի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ Ճավշիր պարսկական (*Oropanax persicus* Boiss). Ճարտարուկ Արարատի (*Draba araratica* Rupr), Ճարտարուկ խոզնավոր(*Draba hispida* Willd), Էվնոմիա կլորատերև (*Eunomia rotundifolia* C. A. Mey. ), Ջրահարս փոքր (*Najas minor*), Աղածաղիկ Կուլպական (*Halanthium kulpianum* (K. Koch Bunge), Երնջակա Վանատուրի(*Eryngium*

wanaturii Woronow), ոգնաթուփ վարսակային (*Acantholimon avenaceum*), Տերեփուկ Թախտաշյանի (*Centaurea Takhtajanii*) և այլն:



Նկ.8 Ճավշիր պարսկական

**Կենդանական աշխարհ.** տարածաշրջանի կենդանական աշխարհին բնորոշ են անողնաշարավորների՝ միջատների, բզեզների, մորեխների տեսակային բազմազանությունը: Ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են կրիաներ, օձեր, մողեսներ, թռչուններից՝ սև անգղ, կեռնեխ, արտույտ, կաքավ, ծիծեռնակ, ճանճորսներ և այլն, կաթնասուններից՝ եղջերուն, գայլը, գորշ արջ, վայրի խոզ, աղվես, աքիս, կզաքիս, չղջիկներ և այլն:

Կոտայքի մարզում ՀՀ Կարմիր գրքում գրանցված են անողնաշար կենդանիների՝ 62, ողնաշարավոր կենդանիների 28 տեսակներ:

Հրազդան գետի սկունքներում գտնվում է ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված Հարթ խիսունջը(*Gyraulus laevis*):

Կոտայքի մարզում ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են՝ Սորելի հայկականը(*Gomphocerus armeniacu*, Հաստածղրիղ լայնացած (*Bradyporus dilatatus*), Թամբակուրծք թարախահան(*Mylabris sedilithorax Sumakov* Ե սևամարմին (*Cylindronotus erivanus*), ապոլոն (*Parnassius apollo kashtshenkoi Sheljuzhko*), Աֆրիկյան փրոթերեբիա(*Proterebia afra hyrcana*), Ալեքսանդր երկարաչափ թիթեռ (*Eupithecia alexandriana Wardikian*), Ռավազիի մրջյուն(*Myrmica ravasini Finzi*), Հայկական իժ(*Viperaa (Montivipera)*): Թռչուններից՝ գառնանգղ(*Gypaetus barbatus Linnaeus*), ՖԳիշանգղ(*Neophron percnopterus Linnaeus*), Օձակեր արծիվ(*Circaetus gallicus*), Տափաստանային արծիվ(*Aquila nipalensis orientalis Hodgson*), Կարմրաստ բազե(*Falco vespertinus Linnaeus*), Բվեճ(*Bubo bub*) և այլն: Երկկենցաղներից Կանաչ դոդոշը (*Bufo viridis*), Սովորական ծառագորտը (*Hyla arborea schelkownikowi*), Լճագորտը (*Pelophylax ridibundus*) և Փոքրասիական գորտը (*Rana macrocnemis*), կաթնասուններից՝ Գորշ արջը(*Ursus arctos Linnaeus*):



Նկ.9 Ապոլոն



Նկ.10 Կարմրատոտ բազե

Տարածաշրջանի ջրային ավազաններում հանդիպում են կարմրախայտ, քուռի բեղլու, կողակ և այլ ձկնատեսակներ:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայուն են էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները, ինչպես նաև բացակայում են կենդանիների միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու, մարդու ազդեցության գոտում գտնվելու պատճառով:

Նախատեսվող գործունեության տարածքում բնական էկոհամակարգերը բացակայում են, քանի որ տարածքը գտնվում է արդյունաբերական գոտում: Տարածքում չկան անտառային զանգվածներ, մոտակա անտառային նշանակության հողերը գտնվում են Ծաղկաձորում, Մեղրաձորում:

### 8.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Հայաստանի Հանրապետությունում կենսաբազմազանության պահպանումը, հիմնականում, իրականացվում է Բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) (պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ), որտեղ կենտրոնացված է բուսական և կենդանական աշխարհի տեսակազմի մոտ (60-70)%-ը, ներառյալ հազվագյուտ, վտանգված, անհետացման եզրին հայտնված և էնդեմիկ տեսակների ճնշող մեծամասնությունը:

Հայաստանի տարածքի 387 հազ. հա կամ 13%-ը բնության հատուկ պահպանվող տարածքներ են (ԲՀՊՏ)



Գործունեության տարածքն անմիջական սահմաններ ԲՀՊՏ-ների հետ չունի: Տարածքին ամենամոտը՝ «Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրն է, որը ուսումնասիրվող տարածքից գտնվում է մոտ 2,6 կմ հեռավորության վրա:

«Արզական-Մեղրաձոր» պետական արգելավայրը ստեղծվել է 1971 թվականին՝ Մակերեսը՝ 13532 հա՝ կենդանական և բուսական աշխարհի հազվագյուտ տեսակների պահպանման նպատակով: Գտնվում է Մարմարիկ և Դալարիկ գետերի ավազաններում, 1600-2100մ բարձրությունների վրա: Արգելավայրի հիմնական բուսատեսակը կաղնու անտառներ են, տարածքում աճում են 800 տեսակի անոթավոր բույսեր, որոնցից 9-ը՝ գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Կենդանատեսակներից արգելավայրում ապրում են 1800 տեսակի անողնաշարավորներ, 4 տեսակի երկկենցաղներ, 28 տեսակի սողուններ, մոտ 120 տեսակի թռչուններ, կաթնասուններ՝ այծյամը, գորշ արջը, վայրի խոզը, կովկասյան մարեհավը, աշլուսանը, ուլարը:

**8.9. Պատմության և մշակութային հուշարձաններ**

Կոտայքի մարզը հանդիսանում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից մեկը: Մարզի տարածքում են գտնվում հազարից ավելի պատմամշակութային հուշարձաններ՝ եկեղեցական համալիրներ, մատուռներ, տուն-թանգարաններ: Համաձայն Կոտայքի մարզպետարանի էլեկտրոնային կայքի՝ մարզում առկա է 3208 հուշարձան, 811 պահպանման միավոր, 2640 պատմամշակութային անշարժ հուշարձաններ, որոնք ՀՀ պետական սեփականություն են համարվում և օտարման ենթակա չեն: Մարզում կատարված են 18 հնագիտական պեղումներ, բացված են քարեդարյան կայաններ,

նախամարդու քարանձավներ, բրոնզեդարյան դամբարանադաշտեր, կիկլոպյան ամրոցներ:

Մարզի տարածքում են գտնվում հայկական հելլենիստական ճարտարապետության՝ մ.թ. 1 -ին դարում Արևի աստված Միհրի պատվին կառուցված Գառնիի տաճարը, Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցին, Քրիստոնեական շրջանի հայկական վիմափոր ճարտարապետության եզակի ու բարձրարվեստ կոթող՝ Այրիվանք-Գեղարդը, Բջնիի բերդը, 13-րդ դարում կառուցված Կեչառիս վանական համալիրը և այլն:

Հրազդանի պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև 12-15-րդ դար), ավելի բազմազան են 12-13-րդ դարերի հուշարձանները (եկեղեցիներ, ամրոցներ, գյուղատեղիներ): Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները:

**Բնության հուշարձաններ.** Հրազդան քաղաքի հուշարձանները ներկայացված են Հավելված 2-ում՝ համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման հավելված 7-ի:

Տարածաշրջանում առկա են նաև բնության հուշարձաններ, որոնք համաձայն ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման հետևյալ են.

Աղյուսակ 5

ՀՀ	Անվանումը/նկարագիր/	Տեղադիրքը
	<b>Երկրաբանական հուշարձաններ</b>	
1.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
2.	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
3.	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
	<b>Ջրաերկրաբանական հուշարձաններ</b>	
1.	«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
	<b>Կենսաբանական հուշարձաններ</b>	
1.	«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանա-պարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)

Արտադրական տարածքը չի առնչվում Հրազդանի տարածաշրջանի պատմաշակութային և բնության հուշարձանների հետ, ամենամոտ բնության հուշարձանը «Անանուն» քարե կուտակումները գտնվում է 11,3կմ հեռավորության վրա:

## 8.10. Սոցիալ-տնտեսական

Կոտայքի մարզի տարածքը կազմում է 2076կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 42, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 35: Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Համաձայն Կոտայքի մարզպետարանի էլեկտրոնային կայքի՝ մարզում բնակչությունը 2022թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 251000 մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության թվաքանակի 8,5%-ը: Ազգաբնակչությունը հիմնականում հայեր են՝ 97,6%: Ազգային փոքրամասնություններից ապրում են՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, քրդեր:

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, պղինձի, մոլիբդենի, ալյումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիթոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, պեռլիտների, մարմարի, տրավերտինի, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի):

Մարզը զարգացած է սննդամթերքի, մետաղական և ոչ մետաղական հանքարդյունաբերության, ցեմենտի արտադրության, էլեկտրաէներգիայի արտադրության ուղղությամբ:


Գյուղատնտեսության ոլորտը մարզի տնտեսության մեջ առաջնային տեղ է զբաղեցնում: Գյուղատնտեսության տեսակետից մարզը բնութագրվում է որպես կաթնասանասնապահական, հացահատիկային ոլորտ: Գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների միջոցով: Մարզի գյուղատնտեսության ոլորտի հիմնական ուղղություններն են՝ բուսաբուծությունը և անասնապահությունը: Մարզում գործում է 18 սպանդանոց:

Հրազդանի տարածաշրջանում գործում են Աթարբեկյանի և Գյումուշի հիդրոէլեկտրակայանները:

Շնորհիվ իր առողջարանային կենտրոնների զարգացած է զբոսաշրջությունը: Էկոտուրիզմի զարգացումը նպաստում է մարզի համայնքների բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը: Կոտայքի մարզի առկա բնապահպանական խնդիրներն ընդգրկում են հիմնականում ջրօգտագործման, ընդերքօգտագործման, անտառտնտեսավարման ոլորտները:

Մարզի տեղաբաշխվածությունն ըստ համայնքային տարածաշրջանների.

- Հրազդանի տարածաշրջան - 38, 2 % (3 քաղաքային, 14 գյուղական համայնք)
- Աբովյանի տարածաշրջան - 40,4 % (2 քաղաքային, 30 գյուղական համայնք)
- Նաիրիի տարածաշրջան - 21,4 % (2 քաղաքային, 16 գյուղական համայնք )



Մարզկենտրոնը Հրազդան քաղաքն է, որը գտնվում է ծովի մակերևույթից 1600-1750մ բարձրությունների վրա: Մարզկենտրոնից մայրաքաղաք հեռավորությունը 45 կմ է: Քաղաքի վարչական տարածքը կազմում է 15343,72հա, որից գյուղ նշանակության հողատեսքերը կազմում են 11053.08հա, արտադրական նշանակության հողերը՝ 846,63հա, հանգստի գոտիները՝ 35,24հա:

Հրազդան համայնքը նախկինում եղել է արդյունաբերական զարգացած կենտրոն՝ էներգետիկայի, ցեմենտի, վերամշակող ռադիոէլեկտրոնային սարքերի, հագուստի, կաթնամթերքի, հացամթերքի արտադրությունների ուղղությամբ: Այժմ Հրազդանի տարածաշրջանում գործում են ավելի քան 20 ձեռնարկություններ, որոնցից խոշորներն են՝ «Հրազդան ՋԷԿ»-ը, «Գյումուշ ՀԷԿ», «Ցեմենտի գործարան»-ը, «Հրազդանի ՋԷԿ-ի» 5-րդ բլոկը և այլն:

Հրազդան համայնքում ընդգրկվել են հետևյալ բնակավայրերը՝ Լեռնանիստ, Ջրառատ, Սոլակ, Քաղսի: Հրազդանի տարածաշրջանում են գտնվում նախկին արդյունաբերական քաղաքներ՝ Հրազդանը, Չարենցավանը, հանգստյան ու առողջարանային քաղաք՝ Ծաղկաձորը: Գյուղական համայնքներն են՝ Ալափարս, Աղավնաձոր, Արզական, Արտավազ, Բջնի, Լեռնանիստ, Կարենիս, Հանքավան, Մարմարիկ, Մեղրաձոր, Սոլակ, Ջրառատ, Քաղսի, Ֆանտան:

Տարածաշրջանն ապահովված է հաղորդակցության ուղիներով՝ Երևան-Սևան-Իջևան-սահման ավտոմոբիլային ճանապարհը, Երևան-Սևան-Վարդենիս-Սոթք երկաթգիծը:



Հրագրանի տարածաշրջանն ապահովված է երկաթի, ոսկի-բազմամետաղային (Մեդարաձորի), Նեֆելինային սիենիտների(Թեժ սար), այլ շինարարական քարերի հանքավայրերով:

Համաձայն ՀՀ Կոտայքի մարզի Հրագրան համայնքի 2019-2023թթ. զարգացման ծրագրի՝ բնակչությունը 2019թ. կազմում է 58288 մարդ, որից 49% -ը կազմում են տղամարդիկ, 51%-ը՝ կանայք:

Համայնքում աշխատատեղերի բացակայության պատճառով գործազրկության մակարդակը բարձր է: Գործազուրկների հիմնական մասը կանայք են, տղամարդկանց աշխատունակ մասը գնում է արտագնա աշխատանքի:

Հրագրան համայնքն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով, որոնց հիմնական մասը գտնվում է անմխիթար վիճակում: Համայնքը հիմնականում գազիֆիկացված է(99%):

Համայնքում կոշտ կենցաղային թափոնների կառավարումը կատարվում է «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով»: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր՝ Հրագրան համայնքում գտնվող տարածաշրջանային աղբավայր:

Համայնքում առկա են դպրոցներ, նախակրթարաններ, երաժշտական, կերպարվեստի դպրոցներ, մարզադպրոցներ, գրադարաններ, կինոթատրոն, կուլտուրայի տուն, հիվանդանոց, առևտրի և սպասարկաման հիմնարկներ, գործում է կաթի, հացի գործարաններ: Համայնքն ունի զբոսայգի, հանգստի գոտիներ:

**9. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում՝ ընտրված տարբերակի հիմնավորումը:**

ՇՄԱԳ-ի շրջանականերում դիտարկվել է նախատեսվող գործունեության այլընտրանքային տարբերակները, այդ թվում զրոյական, ներկայացվել է ընտրված տարբերակի հիմնավորումը:

**1. Զրոյական այլընտրանք** -նշանակում է նախատեսվող գործունեության չիրականացում: Ընկերությունը չի իրականացնի արտադրական գործընթաց: Այս դեպքում՝

- մետաղ պարունակող թափոնները կշարունակեն մեծ վտանգ ներկայացնել շրջակա միջավայրին և մարդու առողջությանը, քանի որ Հայաստանի հանրապետությունում չկան վտանգավոր թափոնների կուտակման կամ վնասազերծման պոլիգոններ:
- Մետաղական ջարդոնները կկուտակվեն արտադրական տարածքներում, կթափվեն հասարակական տարածքների և բնակավայրի տարբեր հատվածներում կամ կտեղափոխվեն քաղաքային աղբավայրեր՝ առաջացնելով թափոնների կույտեր:

- Հանրապետությունում մետաղի պահանջարկը լրացնելու համար կշահագործվեն հանքավայրեր, շրջակա միջավայրի վրա զգալի, էական ազդեցություններով:

## 2. Այլընտրանք:

- **Տարածքի ընտրության այլընտրանք:** Ընտրվել է արտադրական նպատակային նշանակության տարածք, որը բավականին հեռու է բնակելի և հասարակական շինություններից, 1966թ-ից տարածքում գործել է Հրազդանի ՋԷԿ-ը, որը վարձակալական հիմունքներով տարածք է տրամադրել «Տ-Մետալ» ընկերությանը: Նոր տարածքների օտարում արտադրական նպատակով չի դիտարկվում, քանի որ նոր տարածքների օտարումը և արտադրական նոր տարածքի հիմնումը կարող էր ավելի զգալի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի համար:
- **Տեխնոլոգիական այլընտրանք:** Ընկերությունը օգտագործելու է բացառապես արտասահմանյան առաջադեմ տեխնոլոգիաներ, որի արդյունքում առաջացող արտանետումները նվազագույնն են, քանի որ նախատեսված սարքավորումները աշխատելու են էլեկտրաէներգիայով: Գազով կամ մագուիթով աշխատող սարքավորումների ձեռք բերումը ընկերությունը չի դիտարկել, քանի որ վառելիքի այրման արդյունքում մթնոլորտային ավազան կարտանետվեն վնասակար արտանետումներ:
- **Վառելիքի այլընտրանք:** Գործունեության տեխնոլոգիական գործընթացում օգտագործվելու է էլեկտրաէներգիա, վառելիքի այլընտրանքներ՝ գազի, մագուիթի, դիզ վառելիքի օգտագործում չի նախատեսվում, քանի որ այրման ընթացքում մթնոլորտ են արտանետվելու վնասակար նյութեր, իսկ էլեկտրաէներգիայով աշխատելու պարագայում վառելիքի այրման արդյունքում արտանետումներ չեն լինելու: Գործունեության իրականացման ընթացքում գազ օգտագործվելու է միայն մետաղների հատման ժամանակ՝ պարբերաբար:

**3. Ընտրված տարբերակի հիմնավորումը:** Համաշխարհային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թափոնների առավել տարածված երկրորդական վերամշակման մեթոդը ջերմային վերամշակումն է: Առաջադեմ տեխնոլոգիայի շնորհիվ բարձր ջերմաստիճանային պայմաններում կատարվում է մետաղի վերամշակում:

Նույն քանակի արտադրանք ստանալու համար անհրաժեշտ է հանքարդյունաբերության և համապատասխան վերամշակման գործարանների գործունեության իրականացում:

Հանքավայրերի շահագործման արդյունքում մետաղների կորզման գործընթացն ունենալու է զգալի ազդեցություններ, մասնավորապես ստորերկրյա և մակերևութային ջրերի աղտոտման, ինչը մետաղների երկրորդական վերամշակման պարագայում բացառվում է:

Հանքարդյունաբերության միջոցով մետաղների կորզման ընթացքում կառաջանան մեծաքանակ թափոններ, որոնց կառավարումը մեծ խնդիր է դառնում այսօր աշխարհի շատ երկրներում, այդ թվում Հայաստանում:

Ամբողջ աշխարհում երկրները ստիպված են առերեսվել թափոնների աճող ծավալների մարտահրավերին: Համաձայն 2020թ. «Թափոնների կառավարումը Հայաստանում» զեկույցի՝ թափոնների կառավարման լավագույն ձևերից է թափոնների

վերօգտագործումը՝ վերամշակումը, օգտահանումը վերացումը, հաշվի առնելով երկրում չվերահսկվող աղբավայրերի թիվն ու պայմանները: Այն կնպաստի ներմուծվող ռեսուրսներից Հայաստանի կախվածության նվազեցմանը:

Մետաղների երկրորդական վերամշակման միջոցով հնարավորինս կապահովվի համապատասխան արտադրանքի պահանջարկը ներքին, ինչպես նաև արտաքին շուկայում:

Այս դեպքում ընտրված են էլեկտրաէներգիայով աշխատող առաջադեմ տեխնոլոգիաներ, որոնց պարագայում վառելիք չի այրվելու և այրման արդյունքում արտանետումներ չեն լինելու:

Գործունեությունն իրականացվելու է արտադրական տարածքում, ուստի նոր տարածքների օտարում և լրացուցիչ ազդեցություն չի կանխատեսվում:

**Որպես այլընտրանք դիտարկվել է նաև հանրային քննարկման ժամանակ արված առաջարկությունը՝ գործունեության իրականացման ընթացքում հովացման նպատակով օգտագործվող շրջանառու ջրից առաջացած տաք գոլորշին չսառեցնել, այլ տալ համայնքին՝ ջեռուցման նպատակով:**

Նշված առաջարկը որպես այլընտրանք հնարավոր չէ դիտարկել, քանի որ շրջանառու ջուրը իրականացվում է փակ համակարգով, որի տեխնոլոգիական գործընթացին հնարավոր չէ արտաքին միջամտություն իրականացնել: Այն կհանգեցնի տեխնոլոգիական գործընթացի փոփոխությունների:

## **10. Նախատեսվող գործունեության բնութագրերը, տեխնիկական - տեխնոլոգիական լուծումները**

### **10.1 Տարածքի նախապատրաստական աշխատանքների նկարագիրը**

Արտադրությունը նախատեսվում է իրականացնել «Հրագդան ՋԷԿ»ԲԲԸ-ի տարածքում: Տարածքում արդեն իրականացված էին նախապատրաստական աշխատանքներ, կատարվել են սարքավորումների ապամոնտաժում, տարածքի կարգաբերում, դատարկում, մաքրում: Մինչև նախատեսվող գործունեության սկսելն՝ ամբողջ տարածքը մանրամասն կենթարկվի տեխնիկական աուդիտի: Կիրականացվի տարածք մտնող մուտքի երկաթուղային գծերի կապիտալ վերանորոգում:

Կնախապատրաստվի արտադրական հրապարակը՝ շինհրապարակը, կկատարվեն տարածքի պլանավորման և ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, տարածքում կառանձնացվի մետաղի ջարդոնի կուտակման և պահեստավորման տարածք՝ հարթակ:

**Արտադրական տարածք.** արտադրությունն իրականացվելու է գոյություն ունեցող արտադրական տարածքում՝ շինությունում, որը բաղկացած է 4 հատվածամասերից: Հատվածամասերի հիմքերը ե/բ կետային են, որոնք երկայնական ուղղությամբ կապված են ե/բ պատերով կամ հեծաններով: Հատվածամասերի սյուները մետաղական են՝ կազմովի կտրվածքներով: Նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող շենքի

սեյսմազինվածության բարձրացում վնասված տեղամասերի վերականգնում համաձայն՝ ՀՀՇՆ 20-06-2014 «Շենքերի և կառուցվածքների վերակառուցում, վերականգնում և ուժեղացում. հիմնական դրույթներ» նորմերի պահանջներին համապատասխան:

## 10.2 Արտադրական հզորություններ և տեխնոլոգիական բնութագրերը.

Գործարանի տարեկան արտադրողականությունը կազմելու է 150 000 տոննա հեղուկ պողպատի արտադրություն:

Մետալուրգիական գործարանը նախատեսվում է կառուցել երկու փուլով՝

- I փուլ - պողպատի ջարդոնի ձուլման կազմակերպում,
- II փուլ - մետաղազլոցման արտադրամասի կազմակերպում:

**I փուլն իր մեջ ներառում է հետևյալ սարքավորումների տեղադրումը և աշխատանքների իրականացումը.**

1. Ջարդոնի պատրաստման տարածքի նախապատրաստում:
2. 20 տոննա տարողունակությամբ աղեղային պողպատաձուլական վառարան (EAF 20):
3. Պողպատի արտավառարանային մշակման ագրեգատ «շերեփ-վառարան» (LF):
4. Մեկ հոսքով ճառագայթային շարունակական ձուլման մեքենա (CCM):
5. Պատրաստի պողպատե գլոցվածքի պահեստավորման տարածքի կազմակերպում:

**II փուլն իր մեջ ներառելու է.**

1. Շարժական հատակով կամ մղիչ տիպի տաքացնող վառարանի տեղադրում:
2. Հրաթեփի հիդրոհարում կամ հրաթեփի ջարդիչ տեղադրում:
3. Գլոցահաստոցի տեղադրում:
4. Համալիրի օժանդակ օբեյկտների կազմակերպում, որոնք հիմնական արտադրությունն ապահովում են նյութերով և էներգառեսուրսներով:

## 10.3 Տեխնոլոգիական գործընթացի համառոտ նկարագիրը:

**I փուլ - պողպատի ջարդոնի ձուլման կազմակերպում:** Մետաղի անհրաժեշտ չափաբաժինները ստացվում են գազով կտրող գործիքների միջոցով, որոնք գազի այրումով տաքացնում և թթվածնի բարձր ճնշման շիթի միջոցով կտրում են համապատասխան չափսերի:

Ջարդոնի պատրաստման տարածքից ջարդոնը տեսակավորվում է և առանձնացվում է ձուլման համար անհրաժեշտ չափաբաժնով բեռնվում բեռնման կոնքի մեջ, որով ջարդոնը ռելսերով տեղափոխվելու է դեպի աղեղային վառարան (EAF):

Պողպատի ջարդոնի ձուլումը արտադրամասում իրականացվում է էլեկտրական աղեղային վառարանով (EAF), 20տոննա հեղուկ պողպատի տարողությամբ: Հալեցված պողպատը լցվում է շերեփի մեջ և տեղափոխվում շերեփ վառարան (LF): Հալվածքին ավելացվում է հավելանյութ՝ SiMn72/17 (Ֆերոսիլիկոմանգան՝ МНС-17), FeSi65 (Ֆերոսիլիցիում՝ ФС65), մասնակի կրաքար՝ (CaO), ածխի մասնաբաժին՝ մինչև 2.5 մմ:

Հալեցված պողպատի անհրաժեշտ մակնիշը ստանալու համար կատարվելու է լաբորատոր սարքավորմամբ ստուգում, որը տեղադրվում է աղեղային վառարանի (EAF) և շերեփ վառարանի (LF) մեջտեղում:

Շարունակական պողպատի ձուլման մեքենայի (CCM) վրա պողպատի շարունակական ձուլումը կատարվում է հետևյալ կերպ՝ հեղուկ մետաղը անմիջապես շերեփից

շարունակաբար լցվում է ջրով հովացվող կաղապարի վերին մաս, այնուհետև հոսելով կաղապարի միջով ձևավորվում են քառակուսի և կլոր հատվածքի ձուլակտորներ:

Կաղապարի ներքին մասում տեղադրվում է կտրող մեքենա, որի միջոցով ձուլակտորները կտրվելու են անհրաժեշտ երկարությամբ:

Պատրաստի ձուլակտորները կռունկի միջոցով տեղափոխվում են գլոցվածքի պահեստարան:

Մեկ ցիկլի ընթացքում մետաղի հալումից հալում աշխատանքի տևողությունը կազմում է 57 րոպե, որի ընթացքում առաջացած հալքի ծավալի քաշը կազմում է 20տ:

Շերեփ վառարանում մետաղի հալման տևողությունը կազմում է 17 րոպե:


Աղեղային վառարանը տարեկան աշխատում է 7680 ժամ՝ 320օր/տարի, 24ժամ/օր (320x24=7680ժամ/տարի):

**II փուլ - մետաղագլոցման արտադրամաս:** Ձուլված գլանվածքը կամ մետաղապլաստիկ դեֆորմացիան տեղի է ունենում 1150 °C ÷ 1250°C ջերմաստիճանում: Վառարանից ձուլածո նախապատրաստվածքը անմիջապես մտնում է գլոցման հաստոցի կոպտամշակման վանդակ, որտեղ տեղի է ունենում առաջնային շրջասեղմում:

Այնուհետև, աշխատանքային վանդակներում գլոցման ժամանակ շրջասեղմումը (պլաստիկ դեֆորմացիա) տեղի է ունենում ավելի փոքր տրամագծով: Աշխատանքային վանդակներից մետաղը մտնում է մաքրամշակման վանդակներ, որտեղ այն դեֆորմացվում է մինչև վերջին մաքրամշակման վանդակ ընկնելը, հարթ ձողը վերածվում է ամրանի):

Վերջին մաքրամշակման վանդակի ելքում մետաղի ջերմաստիճանը 950°C ÷ 1050 °C է, որի դեպքում մետաղը ենթարկվում է ջերմային ամրացման բարձր ճնշման ջրով (12 բար) 7,0 մ/վ մինչև 9.0 մ/վրկ արագությամբ: Ջրի ծավալը 250 մ<sup>3</sup>/ժ է և նույնպես շրջանառվում է փակ շրջանառու համակարգով: Ջերմային ամրացումից հետո ամրանը մտնում է սառնարան, որտեղ պատրաստի արտադրանքը նորմալացվում և հովացվում է: Պատրաստի արտադրանքի պահանջվող որակի պողպատի մակնիշներն են՝ Fe-415, Fe-500, Fe-550:

Սառնարանից ամրաններն ընկնում են հոլովակուղիների վրա, որտեղ մետաղը կտրվում է չափային երկարությամբ (12 մետր), փաթեթավորում և ձևավորված փաթեթի կշռում բեռնառաքման համար (կամ պատրաստի արտադրանքի պահեստ): Մեկ փաթեթի քաշը կազմելու է 1.5 տոննայից մինչև 2.5 տոննա կամ ըստ պատվիրատուի ցանկության:



Նախատեսվում է գազի մաքրման համակարգի տեղադրում: Նախատեսվում է թթվածնի կայանի տեղադրում, որը բաղկացած է՝

- Օդային կոմպրեսոր, որը օդ է փչում մթնոլորտից:
  - Օդի բաժանման և թթվածնի արտադրության տեղադրում:
  - Կրիոգենիկ թթվածնի պահեստավորման բաք:
  - Տեխնոլոգիաներին թթվածին բաշխելու ուժեղացնող պոմպեր:
- Թթվածնի սպառման ընդհանուր ծավալը ժամում 1200 խմ է:

Արտանետվող գազաօդային զանգվածը հեռացվում է ներքին ծխահեռացման խողովակի միջոցով, մինչև 150 մետր բարձրությամբ Հրազդանի ՋԷԿ-ի գոյություն ունեցող ծխնելույզը՝ գազերի վերջնական արտանետման համար: Պողպատամշակման ագրեգատների ջրային սառեցումը ամբողջական փակ ցիկլ է՝ օգտագործվելու է Հրազդանի ՋԷԿ-ի առկա հովացման աշտարակները:



Նախատեսված են պահեստային տարածքներ՝ 3240 մ<sup>2</sup> ընդհանուր մակերեսով, որի բաժանումները կիրականացվեն թեթև պատերի տեղադրմամբ:

Տարածքում արդեն իրականացված են նախապատրաստական աշխատանքներ, արդեն կատարվել է սարքավորումների ապամոնտաժում, տարածքի կարգաբերում դատարկում, մաքրում:

Նախատեսվող գործունեությունը սկսվելու է համապատասխան եզրակացությունները և թույլտվությունները ստանալուց անմիջապես հետո: Աշխատանքները կատարվելու են հետևյալ հերթականությամբ:

Նախատեսվում է տանիքի, հովացման աշտարակի վերանորոգում, տրանսֆորմատորների հիմքերի իրականացում, բունկերների պատրաստում և մոնտաժում, ամբարձիչների վերանորոգում, սյուների ուժեղացում և նոր սյուների տեղադրում, վառարանի հիմքերի իրականացում, մետաղական հարթակի կառուցում և տեղադրում, ինֆրաստրուկտուրայի մոնտաժում, EAF և LF ուղիների կառուցում և տրանսֆորմատորների տեղադրում, թթվածնի կայանի տեղադրում, գազամաքրման կայանի տեղադրում, օդափոխության հովանոցի տեղադրում, ենթակառուցվածքների իրականացում, MHՄՅ տեղադրում և ինֆրաստրուկտուրաների մոնտաժում, ամբարձիչի մոնտաժում, էլեկտրամատակարարման իրականացում, այլ աշխատանքներ և ընդհանուր համակարգի փորձարկում: Ամբողջ գործընթացը տևելու է մոտ 1,5 տարի:

**10.4 Ենթակառուցվածքներ.** Տարածքն ապահովված է ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման համակարգերով:

Ընկերությունը տեխնոլոգիական գործընթացն իրականացնելու համար օգտագործելու է գոյություն ունեցող ենթակառուցվածքները (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում, գազամատակարարում. աղբահեռացում և այլն)՝ Հրազդան ՋԷԿ-ի կողմից համապատասխան ոլորտային ընկերությունների հետ կնքված պայմանագրերի պահանջներին համապատասխան: Գործարանի ենթակառուցվածքների սպասարկումը կատարվելու է «Տ-Մետալ» ՓԲԸ-ի և «Հրազդանի ՋԷԿ»ԲԲԸ-ի միջև համաձայնությամբ՝

պայմանագրերի հիման վրա: Ընկերության աշխատակիցներն օգտվելու են տարածքում գոյություն ունեցող սպասարկման համար նախատեսված համապատասխան սենյակներից՝ ճաշարան, սանհանգույց, ցնցուղարան, հանդերձարան և այլն(Հավելված 3):

**Գազամատակարարում:** Հրազդան ՋԷԿ-ի կաթսաները աշխատել են բնական գազով: Հրազդան ՋԷԿ-ի կաթսաները նախապատրաստական փուլում ապամոնտաժվել են, ապամոնտաժվում են նաև կաթսաները սնուցող գոյություն ունեցող գազատար խողովակները:

Գազով կտրող մեքենան օգտագործելու է բնական գազ: Վեր նշված սարքավորումների գազամատակարարումն իրականացվելու է գոյություն ունեցող 600մմ տրամագծով խողովակից՝ սարքավորումներին համապատասխան նոր խողովակների միացմամբ:

Նոր կառուցվող գործարանում օգտագործելու են ավելի քիչ քանակությամբ գազ քան նախկինում Հրազդան ՋԷԿ-ի կաթսաները, ինչի հետևանքով նոր արտաքին գազամատակարարման խողովակաշարի կառուցման անհրաժեշտություն չկա:

**Էլեկտրամատակարարում:** Էլեկտրամատակարարումը կատարվելու է Հրազդան ՋԷԿ-ի ոչ բլոկային մասում գոյություն ունեցող սխեմայով տեղադրված 220/10կՎ 125ՄՎԱ հզորությամբ թվով երկու տրանսֆորմատորներից, որոնք միացված են Հրազդան ՋԷԿ-ի 220կՎ ԲԲՍ-ին: Սեփական կարիքների համար տեղադրված են թվով երկու հատ 10/6կՎ 16ՄՎԱ հզորությամբ տրանսֆորմատորներ, որոնք սնվում են 220/10կՎ տրանսֆորմատորների 10կՎ լարման կողմի հաղորդադողերից: Հրազդան ՋԷԿ-ի ոչ բլոկային մասի 0,4կՎ էլեկտրամատակարարումն իրականացվում է գլխավոր մասնաշենքի Ե-Դ առանցքներում գոյություն ունեցող 6/0,4կՎ լարման ԲԵ-ից: ԲԵ-ում գոյություն ունեն թվով 9 հատ 6/0,4կՎ ուժային տրանսֆորմատորներ՝ 630կՎԱ-ից 750կՎԱ հզորությամբ:

**Աղեղային վառարանի (EAF)** էլեկտրամատակարարումը կատարվելու է 40 ՄՎԱ հզորության վառարանային տրանսֆորմատորի միջոցով, որն իր հերթին սնվելու է «Հրազդանի ՋԷԿ»-ի գոյություն ունեցող 125ՄՎԱ հզորությամբ 220/10կՎ ուժային տրանսֆորմատորից:

**Շերեփ վառարանը (LF)** էլեկտրամատակարարումը կատարվելու է 10ՄՎԱ հզորությամբ վառարանային տրանսֆորմատորի միջոցով, որն իր հերթին սնվելու է «Հրազդանի ՋԷԿ»-ի գոյություն ունեցող 125ՄՎԱ հզորությամբ 220/10կՎ ուժային տրանսֆորմատորից՝ միջանկյալ 16ՄՎԱ հզորությամբ 10/35կՎ լարման ուժային տրանսֆորմատորի տեղադրմամբ:

**Շարունակական պողպատի ձուլման մեքենայի (CCM)** և օժանդակ սարքավորումների էլեկտրամատակարարումը կատարվելու է «Հրազդան ՋԷԿ»-ի գոյություն ունեցող 16ՄՎԱ հզորությամբ 10/6կՎ լարման ուժային տրանսֆորմատորից սնվող շենքի ներսում գոյություն ունեցող 6/0,4կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանից:

Գործարանի 0,4կՎ լարման սարքավորումները սնվելու են շենքի Ե-Ե առանցքներում գոյություն ունեցող ենթակայանից, որտեղ նախատեսվում է թողնել թվով 5 հատ 6/0,4կՎ



լարման ուժային տրանսֆորմատորներ: Նախատեսվում է կիրառել սեկցիավորված համակարգ, որը թույլ կտա ապահովվել հուսալի էլեկտրամատակարարում:

Աղեղային վառարանի, շերեփի վառարանի, շարունակական պողպատի ձուլման մեքենայի, սեփական կարիքների համար ուժային տրանսֆորմերի էլեկտրասնուցման մալուխագծերն անցկացվելու են վերգետնյա վաքերով, գոյություն ունեցող թունելներով՝ այլումինե հաղորդադողերով:

**Շանթապաշտպանություն.** Մետալուրգիական գործարանի շենքի շանթապաշտպանությունը նախատեսվում է իրականացնել շենքի տանիքում շանթապաշտպան ցանցի կառուցմամբ: Ցանցն իրենից ներակացնում է 6x6մ բջջով պողպատե ցանց, որն ամրացվում է տանիքին և շենքի 4 անկյուններից իջեցումներով միացվում է գոյություն ունեցող հողանցման եզրագծին:

Նոր տեղադրվող ԲՄ-ների սարքավորումների պաշտպանությունը կայծակի ուղիղ հարվածներից, կիրականացվի գոյություն ունեցող շանթարգելներով կազմած պաշտպանիչ գոտիով: Առաջացած գերլարումներից սարքավորումների պաշտպանության համար, նախատեսվում են տեղադրել գերլարման սահմանափակիչներ:

**Ջերմամատակարարում.** Իրականացվելու է գործարանի տարածքում առկա՝ «Հրազդանի ՋԷԿ»ԲԲԸ-ին պատկանող կաթսայատնից՝ տաք ջրի մատակարարման միջոցով:

**Օդափոխություն և Հովացման համակարգ.** Գործարանն ապահովված է լինելու օդի ներածման և արտածման, հովացման մեխանիկական համակարգերով՝ արտադրամասում և օժանդակ տարածքներում օդափոխության կարգավորման նպատակով:

**10.5 Օգտագործվող բնառեսուրսներ.** Գործունեության իրականացման ընթացքում օգտագործվելու են բնառեսուրսներ՝ ջուր և բնական գազ: Խմելու ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, կոմունալ-կենցաղային նպատակով: Ձուլման գործընթացում հովացման համակարգի համար օգտագործվելու է «Հրազդանի ՋԷԿ-ի» տարածքում առկա տեխնիկական ջուր՝ փակ շրջանառու համակարգով:

Արտադրական գործընթացում օգտագործվելու է նաև բնական գազ՝ տարեկան 9 մլն մ<sup>3</sup> ծավալով: Գազն օգտագործվելու է գազային հատման և տեխնոլոգիական ռեժիմի պահպանման նպատակով:

**Հումք.** նախատեսվող գործունեության իրականացման համար հիմնական հումք է ծառայելու սև մետաղների ջարդոնը(թափոն): Սկզբնական փուլում ընկերությունը մետաղյա ջարդոնը ձեռք է բերելու ՀՀ տարածքում առկա թափոններից, որոնք կան ՀՀ բնակավայրերի մեծ մասի շրջակայքում՝ անօրինական կուտակման վայրեր: Ընկերությունը թափոնները հավաքելու է այլ կազմակերպություններից կամ անձերից՝ գնման միջոցով: Հետագայում հումքի չբավարարելու դեպքում նախատեսվում է գնել արտերկրից:

Գործունեությունն իրականացվելու է թափոնների օգտագործման, տեղափոխման վերամշակման բնագավառում առկա ՀՀ օրենքների, իրավական ակտերի, շրջակա միջավայրի պահպանության բնագավառում սահմանված ծառայությունների դիմաց

վճարման և լիցենզիաների, իրավունքներն ու պարտականությունները կարգավորող պահանջներին համապատասխան:

## 11. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը

ՀՀ-ում առկա է սև մետաղների՝ պողպատի, երկաթի մեծ պահանջարկ՝ պայմանավորված հանրապետությունում շահագործվող երկաթի հանքերի բացակայությամբ, շինարարության ծավալների աճով: Պողպատից ստացվող արտադրանքի պահանջարկը հատկապես մեծ է շինարարությունում՝ ամրանների և այլ մետաղական կոնստրուկցիաների տեսքով: Հայաստանի հանրապետությունում նշված նյութերի նկատմամբ պահանջարկի հիմնական մասը բավարարվում է արտերկրից՝ ներմուծման միջոցով: ՀՀ կառավարության կողմից վարվում է տեղական արտադրությանը խթանելու քաղաքականություն, մասնավորապես 6 ամսով արգելելով սև մետաղների ջարդոնի արտահանումը Հայաստանից:

ՇՄԱԳ-ի հիմնական նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը. կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը: Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է մշակել գործունեությանն առնչվող ազգային և միջազգային ստանդարտներին համապատասխան բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեղմման ուղղված միջոցառումներ և ներկայացնել դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմները:

Շրջակա միջավայրի գնահատումները կատարելու համար հիմք են հանդիսացել գործունեության իրականացման նախագիծը, առնչվող օրենսդրական դաշտը, համակարգչային տեղեկատվությունը, քարտեզագրական նյութերը, համայնքի և այլ կառույցների կողմից տրված տեղեկատվությունը, կարծիքները, առաջարկությունները, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեխնիկական առաջադրանքը: Կատարվել է նաև գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արտադրության ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Գործարանի շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը հիմնականում կապված են՝

- օդային ավազանի վրա ազդեցության՝ պայմանավորված ձուլման վառարանի աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների,
- ջրային ռեսուրսների օգտագործման,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- արտադրության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության

## 11.1 Օդային ավազան

Օդային ավազանի վրա ազդեցությունների համար հիմք է հանդիսացել հստակեցված նախագծային, տեխնոլոգիական լուծումները, արդիական գազամաքման սարքավորումների կիրառումը:

Աղեղային վառարանից (EAF) ծխագազերի հեռացումը իրականացվում է՝ այն անցկացնելով ծխահեռացման համակարգով, որը համալրված է լինելու գազամաքման սարքավորմամբ: Գազահեռացումը և գազամաքումը իրականացվում է հետևյալ սխեմայով.

Նստեցման և վերջնական այրման խուց՝ այստեղ նստեցման է ենթարկվում ծխագազերում առկա փոշու 45-50%-ն, ինչպես նաև թերայրման պատճառով առաջացած CO-ի վերջնական այրումը, որի արդյունքում CO վերածվում է CO<sub>2</sub> գազի: Այրման համար անհրաժեշտ օդը ներմուծվում է վառարանի ու ծխատարի միջև թողնված բացվածքից: Այնուհետև ծխագազերը անցնում են ջրային հովացման ծխատարներով և ջերմաստիճանը 1200°C իջեցվում է մինչև 120°C: Ջրային հովացման խողովակներից հետո ծխատարը մինչև ցիկլոն իրականացվում է մետաղական խողովակներից առանց ջերմամեկուսացման, որտեղ ևս իրականացվում է ծխի ջերմաստիճանի իջեցում (իջեցման չափը կախված է արտաքին օդի ջերմաստիճանից, որը ձմռանը հասնում է մինչև -30°C, իսկ ամռանը մինչև 35°C):

Այնուհետև ծխագազերը անցնում են ցիկլոնի միջով, որում իրականացվում է ծանր պարունակությունների (փոշու) մինչև 80% կորզում:

Ցիկլոնից հետո ծխագազերն անցնում են թևքային ֆիլտրով, որտեղ ծխագազերից որսվում են փոշու մինչև 96%-ը: Վերը նշվածից հետո ծխագազերը հեռացվում են առկա 150մ բարձրության ծխնելույզով:

Աղեղային վառարանից (EAF) արտադրամաս անջատվող ծխագազերը հեռացվում են վառարանի վերևում տեղադրվող հովանոցի(զոնտ) միջոցով, որը օդատարների միջոցով միացվում է ծխահեռացման ընդհանուր համակարգին:

Շերեփ-վառարանից (LF) նույնպես իրականացվում է ծխագազերի հեռացում ջերմաստիճանի իջեցմամբ և փոշու մաքրման համակարգով, տեղադրված հովանոցի միջոցով: Այսպիսով արտանետումները կանխելու նպատակով նախատեսվում է այժմ աշխարհում լայնորեն կիրառվող գազամաքման եռաստիճան համակարգ՝ գազամաքման փոշին կլանելու նպատակով:

Ընդհանուր առմամբ արտադրության տեխնոլոգիական գործընթացից արտանետվելու են.

- Կոշտ մասնիկներ (փոշի 0,01232գ/վրկ/ 0,3547տ/տարի)
- Կոշտ մասնիկների բաղադրության մեջ մտնում են
- Երկաթի օքսիդ 0.0056գ/վ (0.16տ/տարի)
- Ալյումինի օքսիդ 0.0007գ/վ (0.02տ/տարի)
- Կալցիումի օքսիդ 0.0024գ/վ (0.069տ/տարի)
- Մագնեզիումի օքսիդ 0.0017գ/վ (0.05տ/տարի)

- Մանգան և մանգանի միացություններ 0.0009գ/վ (0.026տ/տարի)
- Սիլիցիումի ամորֆ դիօքսիդ 0.0007գ/վ (0.02տ/տարի)
- Ֆերրոհամաձուլվածքի փոշի 0.0003գ/վ (0.009տ/տարի)
- Վատ լուծվող ֆտորիդներ 0,00002 գ/վ (0,0007 տ/տարի)

Բացի կոշտ մասնիկներից արտանետվելու են նաև.

- Ածխածնի օքսիդ/CO<sub>2</sub>/ 0.097գ/վ (2.79տ/տարի)
- Գազային ֆտորիդներ 0,004 գ/վ (0,127 տ/տարի)

Մթնոլորտ արտանետումները տեխնոլոգիական գործընթացում

Աղյուսակ 6

	Փոշի /կոշտ մասնիկներ/	Գազային ֆտորիդներ	Ածխածնի երկօքսիդ /CO <sub>2</sub> / լրիվ այրում
Արտանետումներ գ/վրկ	0,01232գ/վրկ	0,004 գ/վ	0.097
Արտանետումներ տ/տարի	0,3547տ/տարի	0,127 տ/տարի	2.79

Մետաղական ջարդոնի մոտ 25%-ը մանրացվում է գազային հատումով, իսկ 40% -ը մամլիչով մամլվում է: Մնացած 35%-ն առանց մշակման տրվում է վառարան: Օգտագործվող բնական գազի առավելագույն ծախսը կազմելու է 9,0 մլն մ<sup>3</sup>/տարի: Նախատեսվող գազի ծախսը անհամեմատ քիչ է քան տվյալ տարածքում նախկինում գործող կաթսայատան գազի ծախսից, ինչի արդյունքում գազի այրումից առաջացող արտանետումները բազմակի անգամ կրճատվել են:

Գազային հատում իրականացվում է բարձր ջերմաստիճանում, որի ընթացքում մթնոլորտ են արտանետվում ածխածնի օքսիդ՝ 0,487տ/տարի, ազոտի դիօքսիդ՝ 0,492տ/տարի:

Մթնոլորտ արտանետումները գազային հատման ընթացքում

Աղյուսակ 7

Գազային հատում	ածխածնի օքսիդ	ազոտի օքսիդներ	ընդամենը
Արտանետումներ գ/վրկ	0,0176	0,0178	
Արտանետումներ տ/տարի	0,487	0,492	0,979

Աղյուսակ 8

No	Վնասակար նյութերի անվանումը	Վտանգավորության դասը	ՍԹԿ մմ մգ/մ <sup>3</sup>	Արտանետումներ մթնոլորտ գ/վրկ/տ/տարի
1	Փոշի	3	0.5	0,01232գ/վրկ 0,3547տ/տարի
2	Ածխածնի օքսիդ	4	5.0	0.0176 /0,487
3	Ազոտի օքսիդներ	2	0.2	0,0178/0,492
4	Գազային ֆտորիդներ	2	0,02	0,004 /0,127
Ընդամենը				0,0517/1,46

Մաքրված ծխազագերը մթնոլորտ են արտանետվում 150մ բարձրության գոյություն ունեցող ծխնելույզով:

Կատարվել են գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան արտանետումների հաշվարկ համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 23 հոկտեմբերի 2012թ. N 268-Ա հրամանով հաստատված մեթոդիկայի :

Մթնոլորտ արտանետումների վնասակար նյութերի քանակը և վնասակար արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹԿ մասով ստանալու համար կատարվել է ցրման հաշվարկ՝ Էկոլոգ 4.6 ծրագրով (Հավելված 10):

Համաձայն հաշվարկների՝ կոշտ մասնիկների (ներառված բոլոր բաղադրիչները) կոնցենտրացիան հավասար է 0-ի: Փոքր քանակների պատճառով, ծրագիրը հաշվարկը չի իրականացրել, ինչը նշանակում է, որ Հրագրան քաղաքի օդային ավազանի վրա փոշին (կոշտ մասնիկները) որևէ ազդեցություն չի կարող ունենալ:

**Նյութեր, որոնց հաշվարկը նպատակահարմար չէ, ուստի հաշվարկին չեն կարող մասնակցել**

Հաշվարկի նպատակահարմարության չափորոշիչը E3=0,01

Աղյուսակ 9

ԿՈԴ	Անվանում	գումարը Cm/ՊԸԿ
0007	Կայցիումի օքսիդ	2,9F-07
0009	Սիլիցիումի ամորֆ դիօքսիդ	1,7F-06
0101	ալյումինի օքսիդ	1,7F-05
0123	Էրկաթի օքսիդ	<b>1,7E-05</b>
0138	Մագնեզիումի օքսիդ	5,2F-06
0143	Մանգան և մանգանի միացություններ	1,1F-04
0343	Գազային ֆտորիդներ	5,1F-03
0344	Վատ լուծվող ֆտորիդներ	1,2F-07
2981	Ֆերրոհամաձուլվածքի փոշի	1,8F-05

Նյութի անվանումը	ՍԹԿ մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիան, (մգ/մ <sup>3</sup> )	ՍԹԿ մասով (մգ/մ <sup>3</sup> )
Ազոտի օքսիդներ	<b>0.2</b>	<b>0.109</b>	<b>0547</b>
Ածխածնի օքսիդ	<b>5</b>	<b>0.108</b>	<b>00216</b>

Օդային ավազանի արտանետումների վերահսկման համար կիրառվում են մետաղական կամ պլաստմասե սենսորներ, սակայն էլնելով տարածաշրջանի ջերմաստիճանային պայմաններից, նախատեսվում է տեղադրել մետաղական սենսորներ:

Նոր կառուցվող գործարանում օգտագործելու են ավելի քիչ քանակությամբ գազ քան նախկինում տարածքում գործող «Հրագդան ՋԷԿ»-ի կաթսաները, ինչի հետևանքով արտանետումների քանակը զգալիորեն նվազելու է:

**11.2 Հողային ռեսուրսներ.**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Հրագդան ՋԷԿ»-ի տարածքում՝ արտադրական գոտում: Տարածքը երկար տարիներ շարունակ ենթարկվել է մարդածին ազդեցությանը: Գործունեության տարածքը ասֆալտապատված է: Արտադրական տարածքը, թափոնների պահպանման վայրերը բետոնապատված են, փորման աշխատանքներ չեն նախատեսվում: Գործունեության ընթացքում նոր տարածքներ չեն օտարվելու և նոր հողային ռեսուրսների խախտում կամ աղտոտում չի կատարվելու, հետևաբար գործունեությունը հողային ռեսուրսների վրա ուղղակի ազդեցություն չի ունենալու:

**11.3 Ջրային ռեսուրսներ**

Գործարանը կառուցվում է «Հրագդան ՋԷԿ»-ի գոյություն ունեցող շենքի տարածքում, ուստի նախագծով նախատեսվում է օգտագործել գոյություն ունեցող ջրամատակարարման, ջրահովացման և ջրահեռացման համակարգերը:

Աղեղային վառարանից (EAF) դուրս եկող տաք ծխազագերի հովացման համակարգում ջերմաստիճանը 1200°C-ից իջեցվում է 120°C: Նշված հովացումը իրականացվում է գոյություն ունեցող հովացման փակ, ջրի շրջանառու համակարգի միջոցով:

Խմելու տնտեսակենցաղային ջրամատակարարումն և ջրահեռացումը իրականացվում է գոյություն ունեցող համապատասխան համակարգերի միջոցով՝ անհրաժեշտ հատվածների վերանորոգմամբ:

Տանիքի և տարածքի անձրևատար համակարգը նույնպես գոյություն ունեցող է, բաղկացած է մետաղական խողովակաշարից:

Գոյություն ունեցող ներքին հակահրդեհային համակարգը վերազինվելու է նոր հակահրդեհային ծորակներով՝ համապատասխանեցվելով հակահրդեհային անվտանգության կանոններին: Հակահրդեհային համակարգը բաղկացած է

պումպակայանից, որն ըստ նախագծի պետք է անցնի տեխնիկական ախտորոշում և վերազինում ժամանակակից ավտոմատացված համակարգով:

**Ջրաքանակի հաշվարկ**

**Հրազդանի մետաղական ձուլարանի սարգավորումների ջրաքանակ**

1. սարգավորումների անգնագրային տվյալերը տնտեսական ջրամատակարարման

$$Q_{\text{սարք}} = Q_1 + Q_2 + Q_3 = 295 U^3 / \sigma + 244 U^3 / \sigma + 602 U^3 / \sigma = 1141 U^3 / \sigma$$

որտեղ`

Q1 - շարունակական ձուլման մեքենայի օգտագործվող ջրաքանակ

Q2 - շերտի վառարանի օգտագործվող ջրաքանակ

Q3 - աղեղային վառարանի օգտագործվող ջրաքանակ

2. Մխագազերի հովացման համար օգտագործվող ջրաքանակ

$$Q_{\text{ծխագազ}} = L \times \Delta t = 350000 U^3 / \sigma \times (6000 - 1000) \times 0.24 = 42.000.000 \text{ կկ} / \sigma$$

որտեղ`

Q<sub>ծխագազ</sub> - ծխագազերի ջերմության քանակն է

L - ծխագազերի քանակն է

Δt - ծխագազերի մուտքի ելքի ջերմաստիճանի տարբերություն

$$G_{\text{ջուր}} = Q_{\text{ծխագազ}} / 1000 \Delta t = 42.000.000 / 1000(60 - 30) = 1400 U^3 / \sigma$$

որտեղ`

G<sub>ջուր</sub> - ծխագազերի հովացման համար ջրաքանակն է

Δt - ջրի մուտքի և ելքի ջերմաստիճանի տարբերություն

Ջրի գոլորշիացումը կազմում է 0-10%

Ջրի շրջանառությունը փակ ցիկլային համակարգ է

Շրջանառության մեջ ջրի համալրումը կազմում է մինչև 250 մ<sup>3</sup>/ժ

Խմելու ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, կոմունալ-կենցաղային նպատակով: Ձուլման գործընթացում հովացման համակարգի համար օգտագործվելու է «Հրազդան ՋԷԿ-ի» տարածքում առկա տեխնիկական ջուր՝ փակ շրջանառու համակարգով: Տեխնիկական ջուրն օգտագործվելու է.

✓ 1-ին փուլում՝ 2000 մ<sup>3</sup>/ժամ,

✓ 2-րդ՝ 1000 մ<sup>3</sup>/ժամ-լրասնուցում, ընդամենը՝ 3000 մ<sup>3</sup>/ժամ:

✓ Հովացման աշտարակում՝ 5000 մ<sup>3</sup>/ժամ-ըստ արտադրողականության:

Հնարավոր վթարային իրավիճակների կամ ջրամատակարարման խափանումների դեպքում, տեխնոլոգիական ցիկլն անխափան պահպանելու նպատակով նախատեսվում է տարածքում տեղադրել 10 հատ 2000 մ<sup>3</sup> տարողության ջրի բաքեր:

**Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝**

$$W = (n \times N + n1 \times N1) T$$

որտեղ՝ n – տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է, - 100

N – ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016 մ<sup>3</sup>,

n1 – բանվորների թիվն է - 350,

N1 – ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025 մ<sup>3</sup>/մարդ օր,

T – տարեկան աշխատանքային օրերի թիվը՝ 320 օր, ընդամենը 450 մարդ, որից 100 ԻՏԱ, 350 բանվոր, մի հերթափոխում 175 բանվոր:

Նախնական փուլում աշխատելու են 216 մարդ. 56 մարդ մեկ հերթափոխում, որից 5-ը ԻՏԱ, 51-ը բանվոր, ընդամենը 168 հերթափոխային և 48 ԻՏԱ մեկ հերթափոխով:

Հաշվարկները կատարվել են աշխատողների առավելագույն թվաքանակով և առավելագույն

արտադրողականության աշխատելու պայմանների համար:

$$W = (100 \times 0.016 + 175 \times 0.025) \times 320 = 1912 \text{ մ}^3/\text{տարի}:$$

Միջին օրական՝ 5,97 մ<sup>3</sup>:

Կենցաղային կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$V1 \times (1 - L)$$

որտեղ L – կորստի գործակիցն է, ընդունվում է 5% (0.05)

$$1912 \times (1 - 0.05) = 1816,4 \text{ մ}^3/\text{տ}, \text{ միջին օրեկան՝ } 5,67 \text{ մ}^3:$$

Աշխատողների խմելու, կոմունալ-կենցաղային նպատակներով նախատեսվող ջրի ծախսը կկազմի՝ 1912 մ<sup>3</sup>/տարի:

Գործարանի ջրամատակարարումը կատարվելու է քաղաքային ջրատարից, իսկ ջրահեռացումը՝ քաղաքային կոյուղու ցանցի միջոցով:

**Կեղտաջրերի հեռացում.** գործունեության իրականացման ընթացքում առաջանում են միայն կոմունալ-կենցաղային հոսքաջրեր: Կոմունալ-կենցաղային հոսքաջրերը հեռացվում են տարածքում առկա ջրահեռացման համակարգով:

Անձրևաջրերը հեռացվում են տարածքում առկա անձրևաջրի հեռացման համակարգով:

Արտադրական տարածքում բացակայում են այլ ջրային ռեսուրսները, ուստի արտադրության ընթացքում կեղտաջրերի արտահոսք ջրային ռեսուրս տեղի չի ունենում:

Գործարանի ջրամատակարարումը կատարվելու է քաղաքային ջրատարից, իսկ ջրահեռացումը՝ քաղաքային կոյուղու ցանցի միջոցով:

#### 11.4 Կենսաբազմազանություն

Գործունեությունն իրականացվում է արդեն գոյություն ունեցող ասֆալտապատված արտադրական տարածքում՝ վարձակալության հիմունքներով: Գործունեության հարակից տարածքները գտնվում են մարդածին ազդեցության գոտում՝ խիտ կառուցապատված են, ուստի բացակայում է բուսական աշխարհը և վայրի կենդանիների ապրելավայրերը:

Գործունեության իրականացման ընթացքում նոր տարածքներ չեն ներգրավվելու, ծառահատումներ չեն կատարվելու: Ուստի կենսաբազմազանության վրա գործունեության իրականացումը բացասական ազդեցություն չի ունենալու:

#### 11.5 Թափոններ

Համաձայն Թափոնների կառավարումը Հայաստանում 2020թ. զեկույցի՝ թափոնների կառավարման լավագույն ձևերից է թափոնների վերօգտագործումը՝ վերամշակումը, օգտահանումը վերացումը, հաշվի առնելով երկրում չվերահսկվող աղբավայրերի թիվն ու պայմանները: Թափոնների պատշաճ կառավարումը հնարավորություն է տալիս ստանալ բազմաթիվ օգուտներ՝ տնտեսական, հանրային առողջության, սոցիալական բնագավառներում, ունենալ բնապահպանական ձեռքբերումներ՝ հումքային նյութերի պահպանման, թափոնների կառավարման ծախսարդյունավետության և հողի առավել արդյունավետ օգտագործման արդյունքում: Թափոնների վերամշակման համար էական նշանակություն ունի համաշխարհային փորձի և նորարարությունների կիրառումը:



Թափոնների վերամշակման արդյունքում նորոգման և վերօգտագործման, մշակման, օգտահանման միջոցով կկրճատվի կամ նվազագույնի կհասցվի թափոնների գոյացումը, կուտակումը աղբավայրերում և այլ տարածքներում:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնականում օգտագործվելու է ՀՀ տարածքում առկա սև մետաղները՝ թափոնների տեսքով: Չբավարարելու դեպքում նախատեսվում է այն գնել արտերկրից:

**Թափոնների տեղափոխում.** թափոնների տեղափոխման համար հիմնականում օգտագործվելու է գոյություն ունեցող երկաթգիծը, որը մինչև գործունեության սկսելը կվերանորոգվի: Թափոնների հավաքման նպատակով նախատեսվում է ձևավորել թափոնների ընդունման և հավաքման կետեր հանրապետության տարբեր վայրերում՝ հարակից երկաթգծին:

Մետաղի ջարդոնները պահեստավորվելու են գործունեության 3240մ<sup>2</sup> մակերեսով պահեստային տարածքի թափոնների հավաքման հատվածում: Թափոնի ընդունումը և կուտակումը կկատարվի հաշվի առնելով պահեստում՝ թափոնի կուտակման տեղամասի ծավալային և մակերեսային հնարավորությունները:

Գնված թափոնները կամրջային ավտոկռանների օգնությամբ բեռնվում և լցվում են բեռնման լոգարաններ, որից հետո բեռնվում են պողպատահալման ագրեգատի մեջ: Հավաքված և մաքրված մետաղը լցվելու է հատուկ կաղապարների մեջ և բնական եղանակով հովանալուց հետո տեղափոխվում է պատրաստի արտադրանքի պահեստ:

Գործունեությունն իրականացման ընթացքում հավաքվում են մետաղական թափոններ՝ «Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ՝ 35131100 01 00 4»:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանում են հետևյալ թափոնները.

Աղյուսակ 11

Ծածկագիր	Թափոնի անվանումը	Ագրեգատային վիճակը և ֆիզիկական ձևը	Ծագումը
31202300 01 01 4	Այլ ձուլման պրոցեսների փոշի , մոխիր, ստացք	Կոշտ	Ձուլման արտադրամասեր
Վտանգավորությամբ հասարակացվում է	Սև մետաղի ջարդոնի ձուլումից առաջացած խարամ	Կոշտ	Ձուլման արտադրամասեր

58200600 01 01 4	Յուղոտված լաթեր	Կոշտ	Պրոֆիլակտիկ և վերանորոգման աշխատանքներ, յուղերի հեռացում, սարքավորումների սրբում
91200400 01 00 4	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	Կոշտ	Կազմակերպությունների գործունեություն

Այս կարգի թափոնները համաձայն ՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանի ՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ի պատկանում են վտանգավորության 4-րդ դասին: Նույն հրամանի հավելվածի ցանկում սև մետաղի ջարդոնի ձուլումից առաջացած խարամի համար վտանգավորության դասը բացակայում է:

**Մնացորդային թափոնների բնութագիրը, բաղադրությունը.** Թափոնների վերամշակումից ստացված մնացորդային թափոնները արժեքավոր երկրորդական հանքային հումք են: Մոխիրը և խարամն ունեն հիդրավիկ ակտիվություն և կարող են օգտագործվել որպես հավելումներ՝ պորտլանդական ցեմենտի արտադրության մեջ, դարձնելով այն ավելի ամուր և ճանապարհաշինության մեջ, որտեղ դրանք օգտագործվում են որպես հիմքեր՝ ասֆալտբետոնե ծածկույթների պատրաստման համար: Խարամը կարող է օգտագործվել նաև բետոնի արտադրությունում:

Մետաղների ձուլումից առաջացած խարամը՝ առաջանում է մետաղի ձուլումից՝ 100կգ/տոննա (1 տոննայից կառաջանա 100 կգ) քանակով: Մնացորդային խարամի բաղադրությունը կախված է հալվող մետաղի տեսակից և մետաղի ձուլման գործընթացի առանձնահատկություններից: Խարամում այլ տարրերի միացությունների առկայությունը կախված է հալման ենթակա նյութերի (խտանյութի) բաղադրությունից: Հալման սկզբնական շրջանում առաջացած խարամը պարունակում է մինչև 30%՝ երկաթի (FeO) և ֆոսֆոր (մինչև 3,5% P), ինչպես նաև CaO/SiO<sub>2</sub>, որի պարունակությունը 1-ից պակաս է և ունի ցածր հիմնայնություն:

Վերջնական ձուլումից առաջացած՝ պողպատե շերտից հանված սպիտակ խարամներում երկաթի օքսիդների (FeO) պարունակությունը 1%-ից պակաս է, իսկ CaO պարունակությունը՝ 55-60%, ինչը վկայում է բարձր հիմնայնության մասին: Մնացորդային խարամն ունի բարձր խտություն, մեծ ծակոտկենություն, բարձր ցրտադիմացկունություն, ցածր քայքայում, ինչի արդյունքում այն կարող է օգտագործվել ասֆալտբետոնե ծածկն ամրացնելու նպատակով:

Խարամը հավաքվում է 1տ տարողության բրեզենտե պարկերի մեջ, տեղափոխող սարքի օգնությամբ դատարկվում է խարամի համար նախատեսված հատուկ փոսի մեջ, համապատասխան տեխնիկայի միջամտությամբ մանրացվում, լցվում է գործվածքային կամ բրեզենտե պարկերի մեջ՝ մասնագիտական կազմակերպություններին հանձնելու նպատակով: Այն կարող է օգտագործվել շինարարական ընկերություններում ճանապարհների կառուցման ընթացքում՝ ասֆալտբետոնածածկն ամրացնելու նպատակով:

Արտադրական գործընթացում առաջացած գազամաքրման փոշին՝ 20կգ/տոննա քանակով: Փոշու մեջ CaO/SiO<sub>2</sub>-ի ավելի քան 1,5-2,5 մասի բաղադրությունը մոտեցնում է պոքսուլանդական ցեմենտի հատկություններին և որպես հավելումներ կարող է օգտագործվել շինանյութերի արտադրության մեջ կամ կարող է օգտագործվել որպես հանքային պարարտանյութ: Արտադրական տարածքներում փոշու դեմ պայքարի հիմնական տեխնոլոգիաների օգտագործումը ներառում է պարկերի գոտիների և ցիկլոնների տեղադրում՝ մետաղի հալման գործընթացում փոշու արտանետումների կրճատման նպատակով: Խարամի և փոշու հեռացումը կատարվելու է չոր մեխանիկական եղանակով՝ քերիչով:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանալու են թափոններ յուղոտված լաթերի տեսքով՝ յուղոտված մակերեսների, ձեռքերի, սարքավորումների սրբելու և մաքրելու արդյունքում: Թափոնի կազմը՝ գործվածք՝ 81-84%, յուղ՝ 10-12%, ջուր՝ 3-6%: Թափոնները հավաքվում են հատուկ մետաղական տարողություններում և որոշակի քանակությամբ խառնելով կենցաղային աղբին տեղափոխվելու են աղբավայր:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանալու է նաև կենցաղային աղբ՝ 162000 կգ/տարի քանակով:

Գործունեության ընթացքում աշխատողների առավելագույն քանակը կազմելու է 450 մարդ, որից 350-ը բանվոր, վարչական աշխատողներ՝ 100 մարդ: Գործարանն աշխատելու է 2 հերթափոխով՝ 320 օր:

Տարեկան կենցաղային աղբի քանակը կկազմի՝

$$M=n*m$$

m – կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 360կգ/տ

n – աշխատողների թիվն է՝ 450 մարդ, 320 աշխատանքային օր

$$M=450*360= 162000\text{կգ/տ}$$

Հաշվի առնելով, որ աշխատողները միաժամանակ չեն գտնվելու աշխատավայրում, կենցաղային աղբի օրական ծավալներն ավելի քիչ կլինեն:

Արտադրության տեխնոլոգիական ցիկլում օգտագործվելու են արտասահմանյան արտադրության ֆիլտրեր՝ 2880 հատ: Ֆիլտրերի շահագործման տևողությունը ընդունվում է համաձայն՝ կիրառվող ֆիլտրի անձնագրային տվյալների, բայց ոչ ավել քան 1 տարի (համաձայն պետական ստանդարտների):

Ֆիլտրերի փոփոխման հաճախականությունը կապված է նրանց ստուգման արդյունքներից և աշխատանքի ծանրաբեռնվածությունից: Աղտոտված ֆիլտրերը հավաքվում

են համապատասխան տարաների մեջ և հետ են փոխանցվում արտադրողին՝ նորը գնելու նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև այլ մետաղական մասերի թափոններ՝ կապված սարքավորումների փչանալու կամ վերանորոգման հետ: Այն մետաղական մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման (սև մետաղ չպարունակող) հանձնվելու են մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, իսկ երկաթ պարունակող մասերը հալվելու են:

Թափոնների կառավարման համար նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, ելնելով «Թափոնների մասին» ՀՀ Օրենքի, թափոնների հաշվառման, հեռացման, ոչնչացման և օգտահանման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարի հրամանների պահանջներից:

### **11.6 Արտակարգ իրավիճակներ և անվտանգություն.**

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների ռիսկեր՝ կապված.

- հրդեհների առաջացման,
- բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության (քամու ուժեղացում փոթորիկ),
- սարքավորումների շահագործման ժամանակ հնարավոր վթարային իրավիճակների առաջացման հետ:

Արտակարգ իրավիճակների և անվտանգությունն ապահովելու նպատակով ընկերության տարածքը կփակցվի «Աղետների և վթարների կառավարման պլան»-ը՝ նշված վթարային ելքերով: Տարածքն պահովված է լինելու հակահրդեհային վահանակներով, օդափոխության և հակահրդեհային ազդարարման համակարգերով, տեսահսկման այլ ազդանշանային սարքերով: Արտադրամասը կունենա հողանցում, կրակմարիչներ, ավազով արկղ, բահ և այլն:

Արտակարգ իրավիճակների և անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

### **11.7 Աղմուկ և թրթռում**

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանների պահանջներին համապատասխան: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Արտադրությունում աղմուկի մակարդակի աղբյուր են հանդիսանում ամբարձիչ կռունկները, հալման վառարանը և օդափոխության համակարգի սարքավորումները: Հալման վառարաններն ունեն այրման բարձր արդյունավետություն և աշխատանքի ընթացքում աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ:

Ձեռնարկությունում աղմուկի մակարդակը չի գերազանցելու 70դբ և չի ազդելու արտադրամասի աշխատողների վրա: Ձեռնարկության տարածքը գտնվում է բնակավայրերից 1,2կմ հեռավորության վրա, ուստի չի կարող ազդեցություն ունենալ հարակից տարածքում գտնվող բնակչության վրա: Արտադրամասի տարածքում աղմուկի մակարդակը գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում աղմուկի մակարդակը չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը, սակայն աղմուկի մակարդակի նորմերը պահպանելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան միջոցառումներ:

### **11.8 Մարդու առողջություն և աշխատանքի անվտանգություն.**

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- արտադրական գործընթացում առաջացող հնարավոր վթարների,
- տարբեր տեսակի սարքերի անսարքության,
- տեխնոլոգիական ցիկլի խաթարման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման հետ:

Տարածքում կփակցվեն աշխատանքի անվտանգությունն ազդարարող տեղեկատվական վահանակներ, կտեղակայվեն ազդանշանային համակարգեր:

Մարդու առողջության և աշխատանքի անվտանգության ռիսկերը նվազեցնելու նպատակով հաշվետվության կառավարման պլանով նախատեսվում է միջոցառումներ ուղղված՝ մարդու առողջության և աշխատանքի անվտանգության պահպանմանը:

### **11.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ**

Գործունեությունն իրականացվում է խիտ կառուցապատված տարածքում: Գործունեության և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները: Ուստի վերջիններիս վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառվում են, հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության միջոցառումներ չեն նախատեսվում:

### **11.10 Գումարային ազդեցություններ.**

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Հրազդան ՋԷԿ»-ի արտադրական տարածքում: Հարակից տարածքներում գտնվում են այլ արտադրություններ, մասնավորապես «Հրազդանի Ցեմենտի գործարանը, Հրազդանի ՋԷԿ(5-րդ բլոկ): Գումարային ազդեցությունները դիտարկելու համար հաշվի են առնվել Հրազդան համայնքի տարեկան աղտոտվածության ցուցանիշները՝ միջին կոնցենտրացիաներով, որտեղ իրենց

աղտոտվածության մասնաբաժիններն ունեն Հրազդանում գործող բոլոր ձեռնարկությունները: Նոր կառուցվող գործարանում օգտագործելու են ավելի քիչ քանակությամբ գազ քան նախկինում տարածքում գործող Հրազդան ՋԷԿ-ի կաթսաները, ինչը ենթադրում է, որ Հրազդան քաղաքի ֆոնային աղտոտվածությունը նախկինի համեմատ էականորեն նվազելու է:

Համաձայն 2022թ. դեկտեմբեր ամսվա «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տեղեկագրի՝ Հրազդան քաղաքում վնասակար արտանետումներից սահմանային թույլատրելի արտանետումները գերազանցում է միայն փոշին, ինչը նախատեսվող գործունեության համար իրականացված հաշվարկների համաձայն զրո է և չի կարող ֆոնային աղտոտվածության վրա որևէ գումարային ազդեցություն ունենալ:

Համաձայն կատարված հաշվարկների՝ գործունեության հետևանքով օդային ավազանի վրա աննշան (թույլատրելի նորմայից էականորեն ցածր) ազդեցություն ունեն ազոտի օքսիդները և ածխածնի օքսիդները, ինչը առաջանալու է միայն գազային հատման ընթացքում, ունի պարբերական բնույթ, և համաձայն հաշվարկների գումարային ազդեցություններ չի կարող առաջացնել:

ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները և հաշվարկները ցույց են տալիս, որ նախագիծը շրջակա միջավայրի վրա կունենա աննշան ազդեցություն և որևէ գումարային ազդեցություն չի կարող ունենալ:

Համաձայն հաշվետվության նախատեսվող գործունեության ազդեցությունը (գնահատման 0-5 ցուցանիշներով) շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կարելի ներկայացնել հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 12.

Շրջակա միջավայր	Հավանական ազդեցությունը/A/	Ազդեցության հետևանքը/B/	Ազդեցության գնահատումը/A*B/	Ազդեցության աստիճանը
1	2	3	4	5
1.Օդային ավազան	1	1	1	աննշան
2. Ջրային ռեսուրսներ	0	0	0	չունի
3.Հողային ռեսուրսներ	0	0		չունի
4.Կենսաբազմազանություն	0	0	0	չունի
5.Բնության և մշակութային հուշարձաններ	0	0	0	չունի

Համաձայն հաշվետվության՝ նախատեսվող գործունեությունը շրջակա միջավայրի վրա կունենա աննշան ազդեցություն՝ օդային ավազանի վրա: Իսկ շրջակա միջավայրի այլ բաղադրիչների՝ հողային, ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության վրա ազդեցությունը բացակայում է:

## 12. Շրջակա միջավայրին հասցվող տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է, արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է գումարային արտահայտությամբ,

**ՀԱԳ-ն հողային ռեսուրսների** վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Արտադրությունն իրականացվում է գոյություն ունեցող արտադրական տարածքում, նոր հողային տարածքներ ձեռք չեն բերվելու, հետևաբար հողերի աղտոտում կամ վնասում չի կատարվելու, ուստի հողերի վրա ազդեցությունից բխող տնտեսական վնաս չի հաշվարկվում:

**ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների** վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է: Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցությունը կախված է աղտոտող նյութերի քանակությունից, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակից և դրանց ազդեցության ժամանակահատվածից: Արտադրության իրականացման ընթացքում օգտագործվելու է մաքուր խմելու ջուր: Առաջանալու են միայն կոմունալ-կենցաղային հոսքաջրեր: Կոմունալ-կենցաղային հոսքաջրերը հեռացվում են տարածքում առկա ջրահեռացման համակարգով: Արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու, ուստի ջրային ռեսուրսների վրա տնտեսական վնաս չի հաշվարկվում:

**ՕԱԳ-ն մթնոլորտի** վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է:

### **Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի վրա տնտեսական վնասի հաշվարկը կատարված է ըստ ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին

թիվ 91-Ն որոշման: Համաձայն վերոնշյալ որոշման՝ յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա=1000 \cdot \sigma_q \cdot \varphi_i \text{ որտեղ՝}$$

Ա-ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով,

$\sigma_q$ -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի՝ արդյունաբերական ձեռնարկությունների տարածքի համար սահմանված է 4

$\varphi_i$ -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, համաձայն նշված կարգի 10-րդ և 11-րդ աղյուսակների՝ ածխածնի օքսիդի համար՝ 1, ազոտի երկօքսիդի համար՝ 12.5:

$\rho_i$ -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

$\Phi_g$ -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից:

Սույն կարգի համաձայն՝  $\Phi_g = 1000$  դրամ:

$\rho_i$  գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\rho_i = S_i q$$

որտեղ՝

S<sub>i</sub>-ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Հաշվարկն իրականացվում է անշարժ աղբյուրների համար:

Արտանետումների քանակների և դրանց հետևանքով տնտեսական վնասի հաշվարկները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնտեսական վնասի հաշվարկը

Աղյուսակ 13

Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի			$\varphi_i$	$\sigma_q$	Տնտեսական վնասը, ՀՀ դրամ
	S <sub>i</sub>	q	$\rho_i = S_i \cdot q$			$Ա=1000 \cdot \sigma_q \cdot \varphi_i$
1	2	3	4	5	6	7
1.Ածխածնի օքսիդ	0.487	1	0,487	1	4	1948



2. Ազոտի օքսիդներ	0.492	1	0,492	12,5	4	24600
3. Գազային ֆտորիդներ	0,127	1	0,127	980	4	497840
4. Փոշի /կոշտ մասնիկներ/	0,3547	1	0,3547	10	4	5032
ԸՆԴԱՄԵՆԸ						529 420

Ըստ հաշվարկների սպասվող արտանետումների հասցված տնտեսական վնասը գնահատվել է՝ 529 420 դրամ, ինչը որևէ պարտավորություն չի առաջացնում:

### **13. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը**

Հայաստանի Հանրապետությունում կան տարբեր տեսակի թափոնների, այդ թվում մետաղի ջարդոնի վերամշակման հնարավորություններ: ՀՀ բնակավայրերի մեծ մասի շրջակայքում կարելի է հայտնաբերել այս տեսակ թափոնների անօրինական կուտակման վայրեր: ՀՀ կառավարության կողմից գործուն քայլեր են ձեռնարկվում երկրորդային հումքը տեղում վերամշակելու և տեղական արդյունաբերական ձեռնարկություններին հնարավորություն ընձեռելու զարգացնել սեփական արտադրությունները, օգտագործելով սև և գունավոր մետաղների ջարդոնը և թափոնը:

Թափոնի վերամշակման՝ վերօգտագործման, մշակման, օգտահանման միջոցով կանխվում է թափոնների գոյացման հետագա ավելացումը, կրճատում կամ նվազագույնի է հասցվում դրանց կուտակումներն աղբավայրերում և բացօթյա այլ տարածքներում:

Թափոնների պատշաճ կառավարումը հնարավորություն կնձեռնի ստանալու օգուտներ՝ տնտեսական, հանրային առողջության, սոցիալական և բնապահպանական ոլորտներում, հումքային նյութերի պահպանման, թափոնների կառավարման ծախսարդյունավետության և հողի առավել արդյունավետ օգտագործման միջոցով:

Թափոնների օգտագործումից ստացվող բնապահպանական օգուտները ներառում են.

- ✓ Ջերմոցային զազերի արտանետումների կրճատում:
- ✓ Շրջակա միջավայրի վտանգավոր թափոններով աղտոտվածության նվազեցում:
- ✓ Ջրի և հողի աղտոտվածության կրճատում:
- ✓ Հողի առավել արդյունավետ կառավարում և հումքային նյութերի պահպանություն:

Երկրորդական թափոնների վերամշակումը ևս նախատեսում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցություններ: Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է գնահատման հաշվետվությունում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում նախատեսվող միջոցառումները նպատակ ունեն նվազեցնելու և հնարավորինս կրճատելու շրջակա միջավայրի բաղադրիչների վրա և մարդու առողջության հետ կապված հնարավոր ռիսկերը՝ հողի, ջրի և օդի աղտոտվածության նվազեցման միջոցով:

### 13.1 Օդային ավազան

Արտադրական գործընթացում լինում են օդային ավազան արտանետումներ՝ 1,46տ/տարի քանակով: Սարքավորման արդյունքում մաքրված ծխագազերը մթնոլորտ են արտանետվում 150մ բարձրության՝ գոյություն ունեցող ծխնելույզով:

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով.

- վառարանն ապահովված է ավտոմատ կառավարման համակարգով՝ հոսանքի ավտոմատ հսկիչ, ջերմաստիճանի հսկիչ-կարգավորման սարքերով,

- փոշու և գազերի մաքրման համար արտադրամասում տեղադրվելու է 70000մ<sup>3</sup> հզորությամբ զոնտ, որով մաքրվում են արտադրամասի արտանետումները:

- ծխատար խողովակի ելքում տեղադրվելու է գազամաքիչ՝ օդային ավազան ծխատարից հեռացող գազերի արտանետումները կրճատելու նպատակով,

- պարբերաբար վերահսկվելու են սարքավորումների տեխնոլոգիական ցիկլը, բացառելով վերջինիս անսարք վիճակում աշխատելը,

- անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում կսահմանափակվի ձուլման վառարանի և այլ սարքավորումների աշխատանքը,

- վառարանի կամ սարքավորումների անսարքության ժամանակ անջատվելու են սարքավորումները՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով,

- կատարվելու են օդային ավազանի մոնիթորինգ՝ այրման տեխնոլոգիական գործընթացում փոշու՝ կոշտ մասնիկների նորմատիվային քանակները պահպանելու նպատակով,

- վթարային իրավիճակներում, կոդարեցվի վառարանի և այլ սարքերի աշխատանքը, կձեռնարկվի համապատասխան կանխարգելիչ միջոցներ,

- օդային ավազանի արտանետումների վերահսկման համար կիրառվում են մետաղական սենսորներ:

### 13.2 Հողային ռեսուրսներ

Գործունեության իրականացումը հողային ռեսուրսների վրա անմիջական ազդեցություն չի ունենալու, հետևաբար հողային ռեսուրսների հնարավոր ազդեցության միջոցառումներ չեն նախատեսվում: Միաժամանակ բացառվում է.

- ասֆալտապատ տարածքներից դուրս գործունեության իրականացումը,

- բաց տարածքներում վտանգավոր թափոնների կուտակումները, նյութերի պահեստավորումը:

### 13.3 Ջրային ռեսուրսներ

Արտադրությունում օգտագործվելու է խմելու և տեխնիկական որակի ջուր: Գործունեության իրականացման ընթացքում խմելու ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների համար: Բսկ տեխնիկական ջուրն օգտագործվելու է շրջանառու ջրի ապահովման, սարքավորումների սառեցման համար:

Գործունեության իրականացման ընթացքում արտադրական հոսքաջրեր չեն առաջանալու, քանի որ արտադրությունում ջուրն օգտագործվելու է փակ շրջանառու համակարգով և արտահոսքեր չեն առաջանալու:

Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.

- աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային ջուրը վերցվելու է տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգից՝ պայմանագրային հիմունքներով,
- վառարանի և սարքավորումների հովացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր՝ փակ շրջանառու ցիկլով,
- հնարավոր վթարային իրավիճակների կամ ջրամատակարարման խափանումների դեպքում, տեխնոլոգիական ցիկլն անխափան պահպանելու նպատակով նախատեսվում է տարածքում տեղադրել 10հատ 2000մ<sup>3</sup> տարողության ջրի բաքեր,
- հովացման նպատակով օգտագործվող տեխնիկական ջուրը վերցվելու է «Հրագդան ՋԷԿ»-ի տեխնիկական ջրից (հովացման աշտարակներ)՝ պայմանագրային հիմունքներով:
- հովացման աշտարակների մաքրումը կատարվելու է 10 և ավելի տարին մեկ հաճախականությամբ՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից, պայմանագրային հիմունքներով:

**Կեղտաջրերի հեռացում.** գործունեության իրականացման ընթացքում առաջանում են միայն կոմունալ-կենցաղային հոսքաջրեր:

Կոմունալ-կենցաղային հոսքաջրերը հեռացվում են տարածքում առկա ջրահեռացման համակարգով:

Անձրևաջրերը հեռացվում են տարածքում առկա անձրևաջրի հեռացման համակարգով:

Արտադրական տարածքում բացակայում են այլ ջրային ռեսուրսները, ուստի արտադրության ընթացքում կեղտաջրերի արտահոսք ջրային ռեսուրս տեղի չի ունենում:

### 13.4 Կենսաբազմազանություն

Գործունեությունն իրականացվում է արդեն գոյություն ունեցող ասֆալտապատված արտադրական տարածքում: Գործունեության հարակից տարածքները գտնվում են մարդածին ազդեցության գոտում՝ խիտ կառուցապատված են, ուստի բացակայում է բուսական աշխարհը և վայրի կենդանիների ապրելավայրերը:

Գործունեության իրականացման ընթացքում նոր տարածքներ չեն ներգրավվելու, ծառահատումներ չեն կատարվելու: Ուստի կենսաբազմազանության վրա ազդեցության կանխարգելման միջոցառումներ չեն նախատեսվում:

### 13.5 Թափոններ

Գործունեության իրականացման ընթացքում հիմնականում օգտագործվելու է ՀՀ տարածքում առկա սև մետաղները՝ թափոնների տեսքով: Թափոնի ընդունումը և կուտակումը կատարվում է հաշվի առնելով պահեստում՝ թափոնի կուտակման տեղամասի ծավալային և մակերեսային հնարավորությունները:

Մետաղների ձուլումից առաջանում են թափոններ՝ խարամ, գազամաքրման փոշի, արտադրության գործընթացում օգտագործված ֆիլտրեր, յուղոտված լաթեր, կենցաղային աղբ:

Թափոնների կառավարման և վնասագերծման համար նախատեսվում է.

- թափոնների կառավարումը կատարել Հայաստանի Հանրապետությունում գործող «Թափոնների մասին» ՀՀ Օրենքի, թափոնների հաշվառման, հեռացման, ոչնչացման և օգտահանման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարի հրամանների պահանջներին համապատասխան,

- մետաղական մասերը կուտակել և պահեստավորել գործարանի տարածքում՝ բետոնապատ հատվածում,

- տարածքից խարամի կամ փոշու մաքրումը կատարել մեքենայացված՝ չոր եղանակով,

- արտադրական խարամը հանձնել ճանապարհաշինարարական և այլ շինարարական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- գազամաքրման փոշին հանձնել ցեմենտի արտադրության կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- գազի այրման ընթացքում օգտագործված ֆիլտրերը հավաքել համապատասխան տարաներում և հետ վերադարձնել արտադրող կազմակերպությանը,

- յուղոտված լաթերը 1/10 հարաբերակցությամբ կխառնվեն կենցաղային աղբին և կտեղափոխվեն կենցաղային աղբավայր կամ կհանձնվեն մասնագիտական կազմակերպություններին,

- կենցաղային աղբը կտեղափոխվի աղբավայր՝ Հրագղանի ՋԷԿ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա,

- տարածքում կտեղադրվեն կենցաղային աղբի տեսակավորման աղբամաններ:

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր է առաջանան նաև այլ մետաղական մասերի թափոններ՝ կապված սարքավորումների փչանալու կամ վերանորոգման հետ: Այն մետաղական մասերը, որոնք ենթակա չեն վերանորոգման (սև մետաղ չպարունակող) հանձնվելու են մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով, իսկ երկաթ պարունակող մասերը հալվելու են:

### 13.6 Աղմուկ և թրթռում

Աղմուկի մակարդակը նվազեցնելու և նորմերը պահպանելու նպատակով նախատեսվում է.

- արտադրությունում աղմուկը չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը,
- բացառել սարքավորումների և օդափոխության սարքերի անսարք վիճակում աշխատելը,
- բացառել աշխատատեղերում աղմուկի մակարդակի 70 դԲ (A) գերազանցումը, գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),
- աշխատելու ընթացքում պարբերաբար ստուգել աղմուկի և թրթռումների մակարդակը՝ նորմերը վերահսկելու նպատակով: Աղմուկի մակարդակի նորմերը գերազանցելու դեպքում՝ աղմուկի առաջացման սարքն անջատել՝ մինչև անսարքության վերացումը,
- գործարանն ապահովված է լինելու օդափոխության, գազամաքրման, փոշեռսման, օդի լավորակման համակարգերով, որոնք կապահովեն աշխատատեղերի օդային միջավայրի կազմը՝ համաձայն գործող սանիտարական նորմերի:

### **13.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ**

Գործունեության և հարակից տարածքներում բացակայում են պատմամշակութային հուշարձանները, բնության հատուկ պահպանվող տարածքները: Ուստի վերջիններիս վրա հնարավոր բացասական ազդեցությունները բացառվում են և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

### **13.8 Արտակարգ իրավիճակներ**

- Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների կանխման , նվազեցման նպատակով նախատեսվում է.
- կմշակվի և կներդրվի «Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանը՝ ԱԲՆ տարածքային ստորաբաժանումների համաձայնությամբ,
  - գործունեության տարածքում կփակցվեն արտակարգ իրավիճակների, անբարենպաստ օդերևութաբանական պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումների պլանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
  - շենքի ներսում առկա է հրեղեհամարման գործող համակարգ, որը նախատեսվում է արդիականացնել՝ հակահրդեհային ավտոմատ համակարգերով,
  - գործունեության տարածքում կտեղադրվեն հակահրդեհային հիդրատներ, կրակմարիչներ, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքեր և վահանակներ,
  - քամու, մթնոլորտային տեղումների և այլ վտանգավոր երևույթների ժամանակ աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվելու է, խիստ անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքները կդադարեցվեն, բոլոր տեսակի սնուցման աղբյուրները կանջատվեն,
  - կտեղադրվեն տեսախցիկներ, էլեկտրական սարքավորումների ապահովում ավտոմատ վերահսկման սարքերով,
  - հոսքագծի և այլ սարքավորումների անսարքության ժամանակ անմիջապես անջատել համապատասխան սարքավորումները՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով,

- հոսքագծերի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն անցած մասնագետների կողմից,

- վթարային և հակահրդեհային իրավիճակների կանխման համար նախատեսվում է ջրի պահուստային տարողություններ՝ 10 հատ 2000մ<sup>3</sup> տարողության ջրի բաքեր:

Հրագրան ՋԷԿ-ի ոչ բլոկային մասի տարածքում գույություն ունի ապաստարան՝ 402մ<sup>2</sup> մակերեսով, որը նախատեսված է 300 մարդու պատսպարման համար: Ապաստարանը հազեցած է անհրաժեշտ բոլոր կոմունիկացիաններով և սարքավորումներով, օդափոխության, ծխահեռացման համակարգերով:

### **13.9 Էներգախնայողության և էներգաարդյունավետության**

նպատակով նախատեսվում է.

-արդիական՝ բարելավված էլեկտրական բնութագրերով նոր էլեկտրասարքավորումների կիրառում և տեղադրում,

- մալուխների, հաղորդալարերի ընտրությունն իրականացվում է մակնիշների տիպերի և հոսանքատար ջղերի կտրվածքի ճիշտ ընտրությամբ,

- սեկցավորված համակարգ կիրառում, որը թույլ կտա նորմալ ռեժիմում տրանսֆորմատորներն օգտագործել օպտիմալ ՕԳԳ-ով,

- շենքի ներքին լուսավորության համակարգը իրականացում LED տիպի էներգախնայող լուսատուներով,

- վթարային լուսավորության սարքերում տեղադրվելու է լրացուցիչ վթարային սնուցման բլոկ, որը կապահովվի սարքի շահագործումը հոսանքագրկման ժամանակ՝ մինչև 3 ժամ տևողությամբ,

- գործարանի տեխնոլոգիական պրոցեսում օգտագործվող հիմնական սարքավորումները նախատեսվում է կիրառել ավտոմատ կառավարման սարքավորումներով և ժամանակակից համակարգչային ծրագրերով, որն իր հերթին թույլ կտա օպտիմալացնել օգտագործվող բոլոր էներգառեսուրսների ծախսերը:

### **13.10 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.**

Նախատեսվող գործունեության ընթացքում մարդու առողջության՝ աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգության պահպանման նպատակով նախատեսվում է.

- արտադրությունը կազմակերպել ոլորտին առնչվող ՀՀ-ում գործող օրենսդրության՝ օրենքների, կառավարության որոշումների, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան,

- վտանգավոր թափոնները ժամանակավոր կուտակել հատուկ հատկացված տեղերում,

- սարքերի գործարկումը, հավաքակցումը կամ ապահավաքակցումը պետք է կատարվեն միայն արտադրող գործարանի տեխնիկական անձնագրերին, շահագործման և մյուս նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

- կատարվելու են ձուլման գործընթացի հետ կապված ստուգումներ՝ տեխնոլոգիական գործընթացի անվտանգության կանոնների, տեխնոլոգիական ցիկլի համար սահմանված

ռեժիմի, տեխնիկական պահանջների և պայմանների պահպանման՝ շեղումները բացառելու նպատակով,

- տեխնոլոգիական գործընթացի հետ կապված հիմնական և օժանդակ սարքավորումների, օդափոխության, բոլոր հիմնական հոսքագծերի աշխատանքի վերահսկում՝ վերջիններիս անխափան աշխատանքի պահպանման նպատակով,

- պատրաստի արտադրանքի՝ ձուլվածքի չափսերի, որակական ցուցանիշների չափագիտական վերահսկողություն,

- գործունեության հետևանքով առաջացած երկրորդական թափոնները՝ մինչև տեղափոխելը պահել փակ սենքերում՝ համապատասխան տարաներում,

- էլեկտրամատակարարման համակարգի պաշտպանիչ հողահաղորդիչները(PE) պետք է լինեն գունավոր՝ դեղնականաչավուն,

- հրդեհի և այլ արտակարգ իրավիճակների դեպքում ավտոմատ կերպով կհոսանքազրկվի ամբողջ գործարանը, կգործի հակահրդեհային համակարգը և անձնակազմը կտարհանվի անվտանգ վայր,

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- աշխատողներին ապահովել (ցնուղարան, լվացարան, խոհանոց, հանգստի սենյակ) համապատասխան սանիտարական պայմաններով,

- աշխատավայրում ապահովել առաջին բուժօգնության դեղարկղիկներով՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,

- աշխատակիցներին ապահովել հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, ականջակալներ, կոշիկներ),

- ապահովել աշխատողների համապատասխան մասնագիտական որակավորումը, փորձը, անհրաժեշտության դեպքում պարբերաբար իրականացնել մասնագիտական դասընթացներ՝ ձուլման արտադրության տեխնոլոգիական գործընթացի վերաբերյալ, մասնագիտական պատրաստվածությունը ստուգելու, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,

- ապահովել ձուլման արտադրության տեխնոլոգիական գործընթացի անվտանգության կանոնները, օդափոխության, գազամաքրման, փոշեռսման, օդի լավորակման համակարգերով՝ աշխատատեղերի օդային միջավայրը համաձայն գործող սանիտարական նորմերի պահպանելու նպատակով,

- տեխնաձին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառել միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը:

Բնակչության առողջության հետ կապված ազդեցությունները կլինեն աննշան:

### 13.11 Սոցիալական

Հրագրան համայնքը նախկինում եղել է արդյունաբերական զարգացած կենտրոն հատկապես էներգետիկայի, ցեմենտի, վերամշակող ռադիոէլեկտրոնային սարքերի ուղղությամբ: Այժմ համայնքում բարձր է գործազրկության մակարդակը: Համայնքի նպաստավոր աշխարհագրական դիրքը, տրանսպորտային ուղիների առկայությունը, արդյունաբերական կարողությունների զարգացման հնարավորությունները նպաստավոր են արտադրական գործունեություն ծավալելու և նոր աշխատատեղեր ստեղծելու, համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու համար:

Թափոնների հավաքման նախատեսվող վայրերի ընտրությունը կատարվելու է հիմնականում երկաթուղային կայարաններին մոտիկ՝ Հրագրանում, Աբովյանում, Բյուրեղավանում և այլ բնակավայրերում, հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների ծանրաբեռնվածությունը չավելացնելու և երթևեկությունը չխոչընդոտելու նպատակով: Իսկ Հրագրան քաղաքի տարածքում գործունեության վայր թափոնների տեղափոխումը կատարվելու է երկաթուղով և այդ նպատակով ընկերությունը վերանորոգելու է երկաթգիծը՝ հումքի մատակարարման ուղղությամբ:

Գործարանը տարվա ընթացքում աշխատելու է 320 օր, 2 հերթափոխով, 4 բրիգադով՝ 12 ժամյա գրաֆիկով: Աշխատողների առավելագույն քանակը լինելու է 450 մարդ:

Գործունեության իրականացվելու է գոյություն ունեցող արտադրական տարածքում, նոր տարածքներ չեն ներգրավվելու, իսկ բնակելի թաղամասերից գործունեության տարածքը գտնվում է 1,2կմ հեռավորության վրա:

Գործունեության իրականացումն ունենալու է համայնքի բնակիչների համար դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն.

- բացվելու են նոր աշխատատեղեր, սկզբնական փուլում 216, հետագայում 450 աշխատատեղ:

Այն կնպաստի.

- համայնքի բնակչության գործազրկության մակարդակի մեղմացմանը,
- համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը:

Հանրային քննարկումների ընթացքում համայնքի կողմից հարց բարձրացվեց և առաջարկվեց Ձեռնարկողին ֆինանսական աջակցություն ցուցաբերել համայնքին, մասնակցել համայնքում նախատեսվող ծրագրերի իրականացմանը, մասնավորապես ճանապարհների բարեկարգման, դպրոցների, մանկապարտեզների վերանորոգման աշխատանքներին և այլն:

Ձեռնարկողը պատրաստակամություն հայտնեց աջակցություն ցուցաբերել համայնքին՝ գործունեության իրականացման տարիների ընթացքում, վերջինիս հետ, փոխադարձ համաձայնությամբ, ճշտել համայնքային խնդիրների աջակցման ուղղությունները:

Ընկերության կողմից նախատեսվում է համայնքին ցուցաբերել ֆինանսական օժանդակություն տարեկան 20,0մլն ՀՀ դրամի չափով՝ ճանապարհաշինության, կրթական օջախների հովանավորման և վերանորոգման ոլորտներում:



### 13.12 Կանաչապատում

Գործունեության տարածքը մասնակիորեն կանաչապատված է՝ մոտ 100 հա: Առկա են պտղատու և դեկորատիվ ծառեր, խոտածածկ: Գործունեության իրականացման տարածքում կանաչապատման աշխատանքներ չեն կատարվելու, քանի որ գործունեության տարածքը պատկանում է «Հրազդան ՋԷԿ»-ին, ընկերությունը գործունեությունն իրականացնելու է վարձակալության հիմունքներով: «Հրազդան ՋԷԿ»-ի կողմից տարածքի բարեկարգման կամ կանաչապատման աշխատանքերի նախատեսման դեպքում ընկերությունը կմասնակիցի դրանց կատարմանն՝ իր հնարավորությունների սահմաններում:

### 14. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Ձեռնարկողի և Հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Մետաղների վերամշակման արտադրության գործընթացում մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված:

Այդ նպատակով նախատեսվում է.

- Գործունեությունն իրականացնել թափոնների օգտագործման, տեղափոխման վերամշակման բնագավառում առկա ՀՀ օրենքների, իրավական ակտերի, շրջակա միջավայրի պահպանության բնագավառում սահմանված ծառայությունների դիմաց վճարման և լիցենզիաների, իրավունքներն ու պարտականությունները կարգավորող պահանջներին համապատասխան:
- «Տ-Մետալ» ՓԲ ընկերության կողմից իրականացնել կանոնավոր, պլանային ներքին ստուգումներ՝ արտադրական գործընթացը վերահսկելու և անհրաժեշտ միջոցներ կիրառելու նպատակով:
- Տարածքում կատարել նմուշառում և օդում առկա վնասակար նյութերի պարունակության որոշում, այդ նպատակով ծխատար խողովակի ելքում կտեղադրվեն սենսորներ:
- Նմուշառումը և օդում դրանց պարունակության որոշումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:
- Մոնիթորինգը կկատարվի ամիսը 1 անգամ պարբերականությամբ՝ երկուական նմուշառմամբ,
- Աշխատողների համար մասնագիտական դասընթացների իրականացում՝ մասնագիտական որակավորման համապատասխանությունը արտադրության պահանջներին:
- Աշխատողների աշխատանքի պայմանների ապահովում ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների

սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու ուժեղացում, փոթորիկ և այլն) դեպքում հետևել վառարանի տեխնոլոգիական գործընթացին, կատարել օդային ավազանի դիտարկումներ տեսողական կամ չափագրման միջոցով՝ օդային ավազան արտանետումները կանխելու նպատակով:
- Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում՝ միջոցառումներն իրականացվելու են ընկերության անվտանգության պատասխանատուի կամ նրան փոխարինող անձի կողմից:
- Գործունեության ընթացքում արտահոսքի, անսարքությունների դեպքում աշխատանքները դադարեցվում են՝ ժամանակավոր կամ վերջնական՝ մինչև դրանց կարգաբերումը:

#### **15. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական միջոցառումների (կառավարման պլան) նախագիծ**

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է ՇՄԱԳ հաշվետվությունում նշված բնապահպանական միջոցառումների, մոնիթորինգի ծրագրի, արտակարգ իրավիճակներում միջոցառումների պատշաճ իրականացման միջոցները՝ աղյուսակային տեսքով: Այն ամփոփում է գործունեության իրականացման հետևանքով ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, նախատեսվող ազդեցությունների մեղմման միջոցառումները, իրականացնող մարմինների և գումարային գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը:

**16. Նախատեսվող գործունեության իրականացման բնապահպանական կառավարման միջոցառումների նախագիծ**

№	Արտադրական գործընթացում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող	Ծախսերը /դրամ/
1	Օդային ավազան	<p>- Օդային ավազան արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- վառարանն ապահովված է ավտոմատ կառավարման համակարգով՝ գազի, հոսանքի ավտոմատ հսկիչ, ջերմաստիճանի հսկիչ-կարգավորման սարքերով,</p> <p>- ծխատար խողովակի ելքում տեղադրել գազամաքիչ՝ օդային ավազան ծխատարից հեռացող գազերի արտանետումները կրճատելու նպատակով,</p> <p>- պարբերաբար իրականացնել սարքավորուման հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ, բացառելով վերջինիս անսարք վիճակում աշխատելը,</p> <p>- անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում կսահմանափակվի վառարանի աշխատանքը,</p>	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ          Համապատասխան վերահսկողական մարմիններ:	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		<p>- վառարանի կամ սարքավորումների անսարքության ժամանակ անջատվում են, սարքավումները՝ օդային ավազան վնասակար արտանետումները կանխելու նպատակով,</p> <p>- կատարվելու են օդային ավազանի մոնիթորինգ՝ այրման տեխնոլոգիական գործընթացում արտանետումները կանխելու, նորմատիվային քանակները պահպանելու նպատակով,</p> <p>- վթարային իրավիճակներում կդադարեցվի աշխատանքը, կձեռնարկվի համապատասխան կանխարգելիչ միջոցներ,</p> <p>- օդային ավազանի արտանետումների վերահսկման համար կիրառվում են մետաղական սենսորներ:</p>			
2	<b>Ջրային ռեսուրսներ</b>	<p>Ջրային ռեսուրսների պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <p>-աշխատողների խմելու, տնտեսակենցաղային, ջուրը վերցվելու է գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգից՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- վառարանի և սարքավորումների հովացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր՝ փակ շրջանառու ցիկլով,</p> <p>-հնարավոր վթարային իրավիճակների կամ ջրամատակարարման խափանումների դեպքում, տեխնոլոգիական ցիկլն անխափան</p>	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

	<b>Կեղտաջրեր</b>	<p>պահպանելու նպատակով նախատեսվում է տարածքում տեղադրել 10հատ 2000մ<sup>3</sup> տարողության ջրի բաքեր,</p> <p>- հովացման նպատակով օգտագործվող տեխնիկական ջուրը վերցվելու է «Հրագրան ՋԷԿ»-ի տեխնիկական ջրից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>- հովացման աշտարակների մաքրումը կատարվելու է 10 և ավելի տարի հաճախականությամբ՝ մասնագիտական կազմակերպությունների կողմից, պայմանագրային հիմունքներով:</p> <p>- Կոմունալ-կենցաղային հոսքաջրերը հեռացվում են տարածքում առկա ջրահեռացման համակարգով:</p>			
<b>3</b>	<b>Թափոններ</b>	<p>Թափոնների կառավարման և վնասագերծման համար նախատեսվում է.</p> <p>- թափոնների կառավարումը կատարվելու է Հայաստանի հանրապետությունում գործող «Թափոնների մասին» Օրենքի, թափոնների հաշվառման, հեռացման, ոչնչացման և օգտահանման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների, Առողջապահության նախարարի հրամանների պահանջներին համապատասխան,</p>	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		<ul style="list-style-type: none"> <li>- մետաղական մասերը կուտակել և պահեստավորել բետոնապատ տարածքում՝ պահեստում,</li> <li>- տարածքից խարամի կամ փոշու մաքրումը կատարել չոր եղանակով,</li> <li>- արտադրական խարամը հանձնել ճանապարհաշինարարական և այլ շիանարարական ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,</li> <li>- գազամաքրման փոշին հանձնել ցեմենտի արտադրության կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,</li> <li>- գազի այրման ընթացքում օգտագործված ֆիլտրները հետ վերադարձնել արտադրող ընկերություններին,</li> <li>- յուղոտված լաթերը 1/10 արարբերակցությամբ խառնվում են կենցաղային աղբին և տեղափոխվում են կենցաղային աղբավայր կամ հանձնվելու են մասնագիտական կազմակերպություններին,</li> <li>- կենցաղային աղբը տեղափոխել աղբավայր՝ Հրազդանի ՋԷԿ-ի հետ կնքված պայմանագրի հիման վրա,</li> <li>- տարածքում տեղադրել կենցաղային աղբի տեսակավորման աղբամաններ:</li> </ul>			
--	--	---	--	--	--

4	Աղմուկ և թրթռում	<p>Աղմուկի մակարդակը նվազեցնելու և նորմերը պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- արտադրությունում աղմուկը չի գերազանցելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը,</li> <li>- բացառել սարքավորումների և օդափոխության սարքերի անսարք վիճակում աշխատելը,</li> <li>- բացառել աշխատատեղերում աղմուկի մակարդակի 70 դԲ (A) գերազանցումը, գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),</li> <li>- աշխատելու ընթացքում պարբերաբար ստուգել աղմուկի և թրթռումների մակարդակը՝ նորմերը վերահսկելու նպատակով: Աղմուկի մակարդակի նորմեր գերազանցելու դեպքում աղմուկի առաջացման սարքն անջատվելու է, մինչև անսարքության վերացումը:</li> <li>- գործարանն ապահովվել օդափոխության, գազամաքրման, փոշեռսման, օդի լավորակման համակարգերով, որոնք կապահովեն աշխատատեղերի օդային միջավայրի կազմը՝ համաձայն գործող սանիտարական նորմերի:</li> </ul>	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ  Համապատասխան վերահսկողական մարմիններ:	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում
5	Արտակարգ իրավիճակներ	Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների կանխման , նվազեցման նպատակով նախատեսվում է.	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ	Ներառված է գործարանի շահագործման

		<p>-կմշակվի և կներդրվի «Արտակարգ իրավիճակների պատրաստվածության» պլանը՝ ԱԻՆ համաձայնությամբ,</p> <p>- գործունեության տարածքում փակցնել արտակարգ իրավիճակների պլանը՝ ներառված անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակներին ուղղված միջոցառումները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,</p> <p>- գործունեության տարածքում տեղադրել հակահրդեհային հիդրատներ, կրակմարիչներ՝ 21 հատ, հակահրդեհային վահանակներ, ինչպես նաև անվտանգության ապահովման այլ ազդանշանային սարքեր և վահանակներ,</p> <p>- քամու, մթնոլորտային տեղումների ժամանակ աշխատանքների վերահսկողությունն ուժեղացվելու է, անհրաժեշտության դեպքում՝ աշխատանքը դադարեցվելու է, բոլոր տեսակի սնուցման աղբյուրներն անջատվելու են,</p> <p>- ապահովվել տեսախցիկներով, համապատասխան վերահսկման սարքերով,</p> <p>- հոսքագծի և այլ սարքավորումների անսարքության ժամանակ անմիջապես անջատել համապատասխան սարքավորումները՝ օդային ավազան</p>		<p>Համապատասխան վերահսկողական մարմիններ:</p>	<p>ան ծախսերում</p>
--	--	--	--	--	---------------------



		<p>վնասակար արտանետումները կանխելու նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>- հոսքագծերի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն անցած մասնագետների կողմից,</li> <li>- վթարային և հակահրդեհային իրավիճակների կանխման համար նախատեսվում է ջրի պահուստային տարողություններ:</li> </ul>			
<b>6.</b>	<b>Էներգախնայողության և էներգաարդյունավետության</b>	<p>Էներգախնայողության և էներգաարդյունավետության նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- արդիական՝ բարելավված էլեկտրական բնութագրերով նոր էլեկտրասարքավորումների կիրառում և տեղադրում,</li> <li>- մալուխների, հաղորդալարերի ընտրությունն իրականացվում է մակնիշների տիպերի և հոսանքատար ջղերի կտրվածքի ճիշտ ընտրությամբ,</li> <li>- սեկցավորված համակարգ կիրառում, որը թույլ կտա նորմալ ռեժիմում տրանսֆորմատորներն օգտագործել օպտիմալ ՕԳԳ-ով,</li> <li>- շենքի ներքին լուսավորության համակարգը իրականացում LED տիպի էներգախնայող լուսատուներով,</li> </ul>	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ  Համապատասխան վերահսկողական մարմիններ:	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		<ul style="list-style-type: none"> <li>- վթարային լուսավորության սարքերում տեղադրվելու է լրացուցիչ վթարային սնուցման բլոկ, որը կապահովվի սարքի շահագործումը հոսանքազրկման ժամանակ՝ մինչև 3 ժամ տևողությամբ,</li> <li>- գործարանի տեխնոլոգիական պրոցեսում օգտագործվող հիմնական սարքավորումները նախատեսվում է կիրառել ավտոմատ կառավարման սարքավորումներով և ժամանակակից համակարգչային ծրագրերով, որն իր հերթին թույլ կտա օպտիմալացնել օգտագործվող բոլոր էներգառեսուրսների ծախսերը:</li> </ul>			
7.	<b>Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում, աշխատանքի անվտանգություն</b>	<p>Գործունեության ընթացքում աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգության պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- արտադրությունը կազմակերպել ոլորտին առնչվող ՀՀ-ում գործող օրենսդրության՝ օրենքների, կառավարության որոշումների, Առողջապահության նախարարության հրամանների պահանջներին համապատասխան,</li> <li>- վտանգավոր թափոնները ժամանակավոր կուտակել հատուկ հատկացված տեղերում,</li> <li>- սարքերի գործարկումը, հավաքակցումը կամ ապահավաքակցումը պետք է կատարվեն</li> </ul>	«Տ-Մետալ» ՓԲԸ	«Տ-Մետալ» ՓԲԸ  Համապատասխան վերահսկողական մարմիններ:	Ներառված է գործարանի շահագործման ծախսերում

		<p>միայն արտադրող գործարանի տեխնիկական անձնագրերին, շահագործման և մյուս նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:</p> <ul style="list-style-type: none"> <li>- կատարվելու են ձուլման գործընթացի հետ կապված ստուգումներ՝ տեխնոլոգիական գործընթացի անվտանգության կանոնների, ռեժիմների պահպանման, տեխնոլոգիական ցիկլի համար սահմանված տեխնիկական պահանջների և պայմանների պահպանման, շեղումները բացառելու նպատակով,</li> <li>- տեխնոլոգիական գործընթացի հետ կապված հիմնական և օժանդակ սարքավորումների, օդափոխության, բոլոր տեսակի սարքերի աշխատանքի վերահսկում՝ վերջիններիս անխափան աշխատանքի պահպանման նպատակով,</li> <li>- պատրաստի արտադրանքի՝ ձուլվածքի չափսերի, որակական ցուցանիշների չափազիտական վերահսկողություն,</li> <li>- գործունեության հետևանքով առաջացած երկրորդական թափոնները՝ մինչև տեղափոխելը պահել փակ սենքերում՝ համապատասխան տարաներում,</li> <li>- էլեկտրամատակարարման համակարգի պաշտպանիչ հողահաղորդիչները(PE) պետք է լինեն գունավոր՝ դեղնականաչավուն,</li> </ul>			
--	--	--	--	--	--

		<p>- հրդեհի և այլ արտակարգ իրավիճակների դեպքում ավտոմատ կերպով կհոսանքազրկվի ամբողջ գործարանը, կգործի հակահրդեհային համակարգը և անձնակազմը կտարհանվի անվտանգ վայր,</p> <p>- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,</p> <p>- աշխատողներին ապահովվել (ցնուղարան, լվացարան, խոհանոց, հանգստի սենյակ) համապատասխան սանիտարական պայմաններով,</p> <p>- աշխատավայրում ապահովվել առաջին բուժօգնության դեղարկղիկներով՝ աշխատողներին անհրաժեշտ օգնություն ցույց տալու համար,</p> <p>- աշխատակիցներին ապահովվել հատուկ, անհատական պաշտպանական միջոցներով (դիմակներ, ձեռնոցներ, համապատասխան արտահագուստ, գլխարկ պաշտպանիչ ակնոցներ, կոշիկներ),</p>			
--	--	---	--	--	--

		<p>- ապահովել աշխատողների համապատասխան մասնագիտական որակավորումը, փորձը, անհրաժեշտության դեպքում պարբերաբար իրականացնել մասնագիտական դասընթացներ՝ ձուլման արտադրության տեխնոլոգիական գործընթացի վերաբերյալ, մասնագիտական պատրաստվածությունը ստուգելու, գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և աշխատողների մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով,</p> <p>- ապահովվել ձուլման արտադրության տեխնոլոգիական գործընթացի անվտանգության կանոնները, օդափոխության, գազամաքրման, փոշեռսման, օդի լավորակման համակարգերով՝ աշխատատեղերի օդային միջավայրը համաձայն գործող սանիտարական նորմերի պահպանելու նպատակով,</p> <p>- տեխնաժին վթարների, աղետների առաջացման դեպքում կիրառել միջոցառումներ՝ ուղղված մարդու առողջության և անվտանգության պահպանմանը:</p>			
--	--	--	--	--	--

8.	Սոցիալական	Գործունեության իրականացումը կնպաստի. - Համայնքի բնակչության գործազրկության մակարդակի մեղմացմանը, - համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական վիճակի բարելավմանը, - նոր աշխատատեղերի բացմանը:	«Տ-Մետալ» ՓԲԸ		20,0 մլն
----	------------	--	---------------	--	----------

**17. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ**

հհ	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման եղանակը	Ժամանակամիջոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
1	<b>Օդային ավազան</b>	<p>1. Օդային ավազան արտանետումների պարբերական վերահսկում:</p> <p>2. Փոշու մաքրման գտիչների, ցիկլոնների և այլ սարքերի վերակսկում</p>	Գործունեության ենթակա տարածքում, մոտակա բնակավայրերի հատվածում	<p>Համապատասխան մասնագետի կողմից ստուգայցեր, գործիքային ստուգումներ, նմուշառում</p> <p>Մասնագետների կողմից ստուգումներ</p>	Պարբերաբար՝ Ամենօրյա, ամսական Պարբերաբար/օրենսդրությամբ սահմանված կարգով/	«Տ-Մետալ» ՓԲԸ  Համապատասխան վերահսկողական մարմիններ:
2	<b>Թափոններ</b>	<p>1. Թափոնների կանոնավոր հավաքում պահում, մնացորդային թափոնի տեղափոխում</p> <p>2. Թափոնների մոնիթորինգ</p>	Գործունեության տարածքից  Արտադրական տարածքում:	<p>Համապատասխան պայմանգրերի հիման վրա:</p> <p>Համապատասխան մասնագետների կողմից՝ տեսողական ստուգումներ:</p>	Պայմանագրերում ամրագրված ժամանակահատվածին համապատասխան  Եռամսյակը 1 անգամ  Պարբերաբար՝ /ՀՀ Օրենսդրությամբ սահմանված	«Տ-Մետալ» ՓԲԸ

					կարգով/	Համապատասխան վերահսկողական մարմիններ:
<b>3.</b>	<b>Արտակարգ իրավիճակներ</b>	<p>1. Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին:</p> <p>2. Հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p> <p>3. Արտակարգ իրավիճակների պլանի առկայություն՝ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:</p>	Գործունեության վայր:	<p>Իրազեկումներ և ստուգումներ:</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Ամենօրյա</p> <p>Պարբերաբար</p>	<p>«Տ-Մետալ» ՓԲԸ</p> <p>Համապատասխան վերահսկողական մարմիններ:</p>



4.	<b>Աղմուկ, թրթռում</b>	Աղմուկի և թրթռումների մակարդակի չափագրումներ:	Գործունեության իրականացման տարածքում:	Ստուգումներ՝ տեխնոլոգիական և ավտոմատ կառավարման համակարգերի, չափիչ սարքերի հսկում:	Օրական Պարբերական ստուգայցեր՝ համապատասխան մասնագետի կողմից (10 -15 օրը 1 անգամ):	«Տ-Մետալ» ՓԲԸ Համապատասխան վերահսկողական մարմիններ:
5.	<b>Մարդու առողջություն, Աշխատանքի անվտանգություն</b>	Աշխատողների աշխատանքային անվտանգության ապահովում՝ մարդու առողջության պահպանման նպատակով	Արտադրական տարածքում:	Դիտարկումներ, ստուգումներ:	Ամենօրյա	Համապատասխան վերահսկողական մարմիններ:
6.	<b>Բողոքների ընթացակարգ</b>	Հետաքննել բնակչության բողոքները, արտանետումների շեղումները:	Գործունեության վայր	Ստուգումներ, ստուգայցեր	Ըստ անհրաժեշտության	«Տ-Մետալ» ՓԲԸ

Գործունեության իրականացման համար «Տ-Մետալ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվում է ներդնել մոտ 27,0 մլդ ՀՀ դրամ, բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի կատարման համար(մասնագետների պատրաստման, ուսուցման դասընթացների, թափոնների հեռացման և այլ ծախսեր ) հատկացնում է տարեկան մինչև 40,0 մլն ՀՀ դրամ:

## **18. Հետնախագծային վերլուծություն**

Մոնիթորինգի և միջոցառումների իրականացման արդյունքում կազմվում է հետնախագծային վերլուծության պլան, որում ներկայացվում է մոնիթորինգի արդյունքների համապատասխանությունը նախագծային լուծումներին, գնահատված հնարավոր ազդեցություններին: Որևէ բացասական շեղման կամ անհամապատասխանության դեպքում ձեռնարկողը նախատեսելու է լրացուցիչ միջոցառումներ աշխատանքների կարգաբերմանն և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված: Դրանք ևս ներառվում են հետնախագծային վերլուծության պլանում:

## **19. Բողոքների ընթացակարգ**

Ընկերությունում կներդրվի բողոքների ուսումնասիրման ընթացակարգ՝ գործունեության իրականացման ընթացքում առաջացած շեղումների. օդային ավազան արտանետումների վերաբերյալ բողոքներին արձագանքելու, շեղումները, դրանց պատճառները բացահայտելու, ժամանակին արձագանքելու և թերությունները վերացնելու նպատակով:

## **20. Հանրային քննարկումներ**

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի և «Հանրային ծանուցման և քննարկումների կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 1325-Ն որոշման Ա կատեգորիայի նախատեսվող գործունեությունների համար նախատեսվում է չորս փուլով հանրային ծանուցման և քննարկումների իրականացում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկությունները և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Հանրությունը համաձայն ընթացակարգի իր կարծիքը և առաջարկությունները կարող է ներկայացնել գրավոր՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

ՇՄԱԳ հաշվետվության շրջանակներում Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական ղեկավարի նստավայրում կատարվել են թվով երեք հանրային քննարկումներ: Երրորդ հանրային քննարկման ընթացքում ներկայացվել է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա, մասնավորապես օդային ավազան արտանետումները և դրանց նվազեցմանը, մեղմանն ուղղված միջոցառումները: Քննարկմանը մասնակցել են Հրազդանի համայնքապետարանի ներկայացուցիչները, համայնքի բնակիչները, նախագծային ընկերության ներկայացուցիչները: Հանրային քննարկման արդյունքում համայնքը սովել է դրական

կարծիք: Հանրային քննարկման ընթացքում հարց բարձրացվեց գործունեության տեխնոլոգիական ցիկլում հովացման նպատակով շրջանառու ջրի օգտագործման ժամանակ առաջացող տաք ջրային գոլորշին որպես այլընտրանք տրամադրել համայնքին՝ ջեռուցման նպատակով: Միաժամանակ հարց բարձրացվեց, որ աշխատողների ընտրությունը կատարել համայնքի բնակիչներից: Հավելված 4,7:

Հաշվետվությունում ներառվել են հանրային լսման ընթացքում բարձրացված հարցերի պատասխանները:

## 21. Եզրահանգում.

**Կարողությունների զարգացում.** հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում թափոնների տեղակայման վայրերի, պոլիգոնների բացակայությունը՝ կարևոր է թափոնների վերամշակման ուղիների, ձևերի ընտրությունը՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Արտադրությունը պետք է շարունակական վերազինվի արդի տեխնոլոգիական սարքավորումներով, թափոնների վերամշակման ժամանակակից լուծումներով, հաշվի առնելով միջազգային փորձի կիրառությունը, նորարարությունների մասին տեղեկություններն ու դրանց ուսումնասիրությունը: Միաժամանակ արտադրությունը պետք է համալրվի բարձրորակ և փորձառու մասնագետներով, ըստ անհրաժեշտության կազմակերպի մասնագետների վերապատրաստման դասընթացներ՝ մասնագիտական որակավորումը բարձր պահելու, մարդու առողջության անվտանգությունը և շրջակա միջավայրի կայունությունն ապահովելու նպատակով:

## 22. Փակման փուլ.

Ընկերության կողմից գործունեության դադարեցման դեպքում վերջինիս կողմից նախատեսվում են գործողությունների պլան, որը ներառում է.

- ✓ գոյություն ունեցող պայմանագրերի դադարեցում,
- ✓ հումքի մատակարարումների դադարեցում,
- ✓ աշխատողների իրազեկում՝ համաձայն ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջների,
- ✓ սարքավորումների ապամոնտաժում,
- ✓ արտադրամասի և տարածքի կարգաբերում, նախկին տեսքի բերում:

Ձեռնարկողի կողմից կատարվելու է պայմանագրերի երկկողմանի դադարեցում, ապամոնտաժվելու են բոլոր սարքավորումները: Պիտանի սարքավորումները կվաճառվեն, իսկ խոտանը(ոչ պիտանի մետաղական մասեր) կտեսակավորվի և կհանձնվի համապատասխան մասնագիտական կազմակերպություններին: Արտադրամասում և հարակից տարածքում կկատարվեն մաքրման, բարեկարգման աշխատանքներ:

## Օգտագործված գրականություն

1. СП 31.13330.2012 ՍՆԻՊ 2.04.02-84\* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:
2. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի հոկտեմբերի 26-ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրաման:
3. ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N 430-Ն հրաման՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկ»-ը հաստատելու մասին:
4. 2009թ. հոկտեմբերի 29-ի ՀՀ Առողջապահության նախարարի N20-Ն հրաման՝ «Վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.001-09 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին»:
5. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий:
6. ՀՀ կառավարության 2007թ. 27.12 «ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքային համայնքի(բնակավայրի)գլխավոր հատակագիծը» N1597-Ն որոշում:
- 7.2020 թվականի ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ զեկույց(մարտ Երևան):
8. ՀՀ կառավարության 2003 թվականի 30 հունվարի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՍՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 121-Ն որոշում:
- 9.ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀԾՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամաններ:
- 10.Применение рукавных фильтров при очистке газов электросталеплавильного производства.

11. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Ленинград, Гидрометеиздат 1986г.
12. Методика расчета выделений (выбросов) загрязняющих веществ в атмосферу при сварочных работах (по величине удельных выделений), Санкт-Петербург 2000г.
13. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами
14. ՀՀ կառավարության 2005թ-ի հունվարի 25-ին ընդունած՝ «Մթնոլորտի վրա սնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը» հաստատելու մասին թիվ 91-Ն որոշում:
17. <https://metallplace.ru/about/stati-o-chernoy-metalurgii/shlaki-v-metallurgii/>:
7. Կոտայքի մարզպետարանի էլեկտրոնային կայք:

Նոտարական ակտի կոդ: 510-20221012-37-6344598  
Նոտարական ակտի գաղտնագիր: W9QG0D



**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան  
Երկու հազար քսաներկու թվականի հոկտեմբերի տասներեքին

Մենք՝ մի կողմից սեփականատեր  
«ՀՐԱԶՂԱՆԻ ԷԼԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՉԷԿ)» Բաց բաժնետիրական  
ընկերությունը, հասցե՝ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ / 1 (ՄԵԿ), ՀՐԱԶՂԱՆ 2302 ԿՈՏԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆ,  
գրանցման համար՝ 33.130.01678, գրանցման ամսաթիվ՝ 2004-09-24, ՀՎՀՀ՝ 03015742, ի դեմս  
գլխավոր տնօրեն՝ ՍՈՒՐԵՆ ՀԱՍԼԵՏԻ ԿԱՐԱՅԱՆԻ, ծնված՝ 26/04/1973թ-ին, ՀԾՀ՝  
3604730082, այսուհետ «Վարձատու», որի անունից լիազորագրով հանդես է գալիս լիազորված  
անձ ԵՐԱՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՅԱՆԴՅԱՆԸ, ծնված՝ 14/12/1992թ-ին, ՀԾՀ՝ 6412920609,  
նույնականացման քարտ՝ 011490844, տրված՝ 009-ի կողմից, 14/07/2021թ-ին, հաշվառված՝  
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ԷՐԵՐՈՒՆԻ, ԱՃԵՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 22 (ՔՍԱՆԵՐԿՈՒ) ՏՈՒՆ, (լիազորագիր տրված  
12/10/2022թ., լիազորագիրը տես գործում),

և մյուս կողմից «Տ-ՄԵՏԱԼ» Փակ բաժնետիրական ընկերությունը, հասցե՝ Հայաստան,  
ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ / 1 (ՄԵԿ) ՀՐԱԶՂԱՆ 2301 ՀՈՏԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆ, ՀՎՀՀ՝  
03027122, գրանցման համար, 85.120.1214064, ի դեմս Գլխավոր տնօրեն՝ ԱՇՈՏ ԷՂՈՒԲՐԻ  
ՄԱՐԿՈՅԱՆԻ, ծնված՝ 28/07/1990թ-ին, ՀԾՀ՝ 3807900535, անձնագիր՝ AT0381677, տրված՝ 099-ի  
կողմից, 11/02/2020թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ՍԵՎԱՆ, ՍԵՎԱՆ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ,  
25 (ՔՍԱՆՀԻՆԿ) ՇԵՆՔ, 35 (ԵՐԵՍՈՒՆՀԻՆԿ) ԲՆԱԿԱՐԱՆ, այսուհետ՝ «Վարձակալ», կնքեցինք սույն  
պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՈՐԿԱՆ**

1.1. Սույն պայմանագրով՝ Վարձատուի ներկայացուցիչը պարտավորվում է Վարձատուի  
անունից վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը  
տրամադրել սեփականության իրավունքով Վարձատուին պատկանող Մարզ Կոտայք, համայնք  
Հրազդան ք. Գործարանային փողոց թիվ 1 (մեկ) շերտային էլեկտրակայան հասցեում գտնվող  
անշարժ գույքից 8.31309 (ութ ամբողջ երեսունմեկ հազար երեք հարյուր ինը) հա մակերեսով  
հողամասը և դրա վրա առկա 54 համարի Գլխ. մասնաշ. ծխած. տեղադր. բաց հրապար.  
24945,8 (քսանչորս հազար ինը հարյուր քառասունհինգ ամբողջ ութ) քմ մակերեսով և 108  
համարի ՁԵԿ-ի ՇԿ վարչակենցաղային մասնաշենքը՝ 649,8 (վեց հարյուր քառասունինը ամբողջ  
ութ) քմ մակերեսով, ամբողջությամբ՝ համաձայն հատակագծերի, որոնք կցվում են սույն  
պայմանագրին և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, այսուհետ՝ «անշարժ  
գույք»:

Անշարժ գույքը հանձնվում է Վարձակալին՝ գույքի նպատակային նշանակությանը  
համապատասխան օգտագործելու նպատակով:

**Ամբողջ անշարժ գույքի նկարագիրը.**

շինության ծածկագիրը՝ 07-001-0288-0014-098  
նպատակային նշանակությունը՝ Արտադրական  
ընդհանուր մակերեսը (քմ.)՝ 226982.65 (երկու հարյուր քսանվեց հազար ինը հարյուր  
ութսուներկու ամբողջ վաթսունհինգ)  
իրավունքի տեսակը՝ սեփականություն

հողամասի ծածկագիրը՝ 07-001-0288-0014  
նպատակային նշանակությունը՝ Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ  
ենթակառուցվածքների օբյեկտների  
ընդհանուր մակերեսը (հա)՝ 193.9846 (մեկ հարյուր ինսուներեք ամբողջ ինը հազար ութ  
հարյուր քառասունվեց)  
իրավունքի տեսակը՝ սեփականություն



226982.65քմ. շենք շինություններից՝ 4195.86քմ. Մասնաշենք, 27.1քմ. Պոմպակայան, 2120քմ. Տարողություն, 7527քմ. Տարողություն, 8000քմ. Տարողություն, 60քմ. Տարողություն, 523.89քմ. Կայան, 354.14քմ. Բաղնիք, 139.58քմ. Լիցքավորման շենք, 981.06քմ. Մասնաշենք, 247.1քմ. Ռեազնետների տնտեսություն, 697.3քմ. Անցակետային գրասենյակ, 5027.06քմ. Անասնաշենք, 10.8քմ. Սլաքավարի տնակ, 1309.34քմ. Մագլութային տնտեսություն, 293.4քմ. Պեմզաբլոկային արտադրամաս, 1054.76քմ. Պահեստ, 186.6քմ. Արհեստանոց, 79.53քմ. Փոխանջատման խուց, 681.6քմ. Էլ. Նորոգման պահեստ, 821.88քմ. Արհեստանոց, 435.84քմ. Պահեստ, 430.37քմ. Պոմպակայան, 157.3քմ. Մագնեզիումի տնտեսություն, 388.67քմ. Շինություն, 9500քմ. Ծխնելույզ, 9500քմ. Ծխնելույզ, 9500քմ. Ծխնելույզ, 9500քմ. Ծխնելույզ, 7200քմ. Ջրավազան, 247.05քմ. Կարգավորիչ, 70.68քմ. Անցակետ, 141.1քմ. Յուղման տնտեսություն, 124.77քմ. Անցումային կետ, 3762քմ. Արտադրամաս, 24945.8քմ. Մասնաշենք, 623.04քմ. Պահեստ12, 492.4քմ. Արհեստանոց, 56.73քմ. Գոասենյակ 65, 747.5քմ. Պոմպակայան, 58.2քմ. Պոմպակայան, 8270քմ. Աշտարակներ, 105.3քմ. Գազաբաշխիչ կետ, 743.36քմ. Վարչական շենք, 6182.7քմ. Օժանդակ միացյալ մասնաշենք, 2614.4քմ. Մագլութի պահեստ, 2548.8քմ. Օժանդակ մասնաշենք, 1800քմ. Մագլութի տարողություն, 1800քմ. Մագլութի տարողություն, 1800քմ. Մագլութի տարողություն, 1800քմ. Մագլութի տարողություն, 482.27քմ. Պահեստ, 63.59քմ. Պոմպակայան, 1054.76քմ. Չետեղարան, 830.1քմ. Ծխատար, 1055.68քմ. Վարչական շենք, 584.34քմ. Օդամուղային , 584.34քմ. Օդամուղային , 501.3քմ. Տեղամաս, 28.1քմ. Տեղամաս, 636.8քմ. Նորոգման շենք, 275.63քմ. Ազոտաթթվածնային կայան, 116.05քմ. Պոմպակայան, 6820քմ. Ջրավազան, 105.3քմ. Արհեստանոց, 572.27քմ. Կայան, 1068.38քմ. Կենտրոնական պահեստ, 937.1քմ. Ծխատար, 186.5քմ. Ստորգետնյա անցում, 690քմ. Ապաստարան, 2443.5քմ. Ճաշարան, 102.08քմ. Պոմպակայան, 860.4քմ. Շինություն, 1749.05քմ. Ավտոտնտեսություն, 17.55քմ. Լիցքավորման կետ, 119.3քմ. Պահեստ, 206.43քմ. Լվացման կետ, 101.43քմ. Գազաբաշխիչ կետ, 478.58քմ. Ենթակայան, 76.92քմ. Պահեստ, 110.26քմ. Շինություն, 14.76քմ. Շինություն, 6.76քմ. Պահակատուն, 1290.11քմ. Մագլութային տնտեսություն, 649.8քմ. Շ. Վ. վարչական մասնաշենք, 94.92քմ. Երկաթգծի շենք, 90.9քմ. Հրդեհային գույքի շենք, 32978.16քմ. Գլխավոր մասնաշենք մեքենայացման սրահ, 78քմ. Փրփուրային լուծույթների շենք, 23քմ. Պահակակետ, 27.2քմ. Կոլեկտորային շինություն, 168.3քմ. Պահեստ, 4279.16քմ. Վարչական շենք, 72քմ. հարթակ, 72քմ. հարթակ, 5600քմ. հարթակ, 5900քմ. հարթակ, 350քմ. հարթակ, 263.1քմ. հարթակ, 12240քմ. հարթակ, 42.46քմ. հարթակ

1.2. Վարձակալության հանձնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին՝ համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Հրազդանի տարածքային ստորաբաժանման կողմից 17.07.2009թ. տրված № 2636360 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի:

1.3. Համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից «11» Հոկտեմբեր 2022 թ. 10:01 դրությամբ տրված ՄՏ-11102022-07-0144 (գաղտնաբառ՝ CWFQKCNW74WW) միասնական տեղեկանքի՝ գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան, ինչը հավաստում է նաև Վարձատուի ներկայացուցիչը:

Համաձայն միասնական տեղեկանքի Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ բաժնի՝ Ծածկագիրը համապատասխանեցված է գործող կարգին: Գործարքից ծագող սեփականության իրավունքը կգրանցվի հասցեի համապատասխան որոշում ներկայացնելու դեպքում: ՀՀ Հարկային օրենսգրքի 236-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների համաձայն, օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում կկատարվի հաշվառող մարմինների կողմից տրված անշարժ գույքի գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ օտարումը կատարվում է դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, սնանկության կառավարչի կողմից կամ գրավառուի կողմից: «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի 4-5-րդ և 7-րդ հոդվածների համաձայն՝ գույքի օտարման գործարքների դիմաց որոշակի սահմանաչափերը գերազանցող գումարն անկանխիկ չվճարելու դեպքում տվյալ գործարքներն առոչինչ են:

## 2. ԿՈՐՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն պարտավորվում է՝  
 ա) պայմանագրի 1.1. կետում նշված անշարժ գույքը հանձնման-ընդունման ակտով հանձնված է վարձակալին 05.10.2022թ. (երկու հազար քսաներկու թվականի հոկտեմբերի հինգին):  
 բ) անշարժ գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

գ) Վարձակալին նախագգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.2. Վարձակալը պարտավորվում է՝

ա) ժամանակին վարձատուրին վճարել վարձակալված անշարժ գույքի համար վարձավճարը սույն պայմանագրով նշված չափերով և պայմաններով, ինչպես նաև ժամանակին կատարել ամսական վարձավճարի հետ կապված հարկային պարտավորությունները:

բ) վարձակալված անշարժ գույքն օգտագործելիս պահպանել տարածքը, սահմանված սանիտարական, բնապահպան, հակահրդեհային և օրենսդրությամբ սահմանված այլ նորմերը, ապահովելով դրանց համապատասխան ձևակերպումները, իսկ անտնտեսվար օգտագործման հետևանքով տարածքին հասցված վնասը վերականգնել սեփական միջոցների հաշվին.

գ) սույն պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում համապատասխան ակտով տարածքը հանձնել Վարձատուրին այն վիճակով, ինչ վիճակով ընդունել է այն, վերացնելով պատճառած վնասը կամ փոխհատուցել վնասը շուկայական գներով՝ հաշվի առնելով բնական մաշվածությունը.

դ) պահպանել տեխնիկական, սանիտարական, հակահրդեհային անվտանգության կանոնները և նշված կանոնները չպահպանելու հետևանքով հատուցել այլ անձանց և տարածքին պատճառած վնասը.

ե) իր միջոցներով վերականգնել տարածքում իր կողմից հասցված վնասները.

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

ա) գույքն օգտագործել նպատակային նշանակությամբ.

բ) Վարձատուրից պահանջել վերացնել բոլոր այն թերությունները և բացթողումները, որոնք խանգարում են Վարձակալին իրականացնել իր իրավունքները, եթե այդ թերություններն ու բացթողումները հնարավոր է վերացնել և դրանց վերացման աշխատանքները դրված է Վարձատուրի վրա կամ եթե դրանք վերացնել իրավասու է միայն Վարձատուրն.

գ) կատարել տարածքի շինարարական, վերանորոգման աշխատանքներ, Վարձատուրի հետ նախապես համաձայնեցված պլանի համաձայն՝ պահպանելով շինարարական նորմերի պահանջները:

2.4. Վարձատուրն իրավունք ունի՝

ա) ստանալ վարձավճար սույն պայմանագրով սահմանված չափով և պայմաններով.

բ) Վարձակալից պահանջել օգտագործել անշարժ գույքը սույն պայմանագրով սահմանված նպատակներով.

գ) Վարձակալի հետ միասին մուտք գործել տարածք վարձակալված անշարժ գույքի օգտագործման պայմանները հսկելու նպատակով:

### 3. ՀԱԾՎԱՐԿՆԵՐԸ

3.1. Վարձավճարը սահմանվում է ամսական 3.300 000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, որը ներառում է հարկերը և վճարվում է մինչև հաջորդող ամսվա քսանը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 2050022633531001 հաշվեհամարին փոխանցում կատարելու եղանակով: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ վարձավճարի հաշվարկը սկսվում է 05/10/2022թ.:

3.2. Օգտագործված էլեկտրական էներգիայի վարձը վճարվում է Վարձակալի կողմից, իսկ ջրի, կոմունալ ծառայությունների, հեռախոսի վարձը՝ Վարձատուրի կողմից:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը վարձատուրի պահանջով.

Վարձատուրի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե վարձակալը՝

1) գույքն օգտագործել է պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության եական կամ բազմակի խախտումներով.

2) էականորեն վատթարացրել է գույքի վիճակը.

3) պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

4) վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգում այն դեպքերում, երբ, օրենքին, այլ իրավական ակտերին կամ պայմանագրին համապատասխան, հիմնական վերանորոգում կատարելը վարձակալի պարտականությունն է:

4.2. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը վարձակալի պահանջով.



Վարձակալության պայմանագիրը, վարձակալի պահանջով, դատարանով կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

- 1) վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար.
- 2) վարձակալին հանձնված գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին, և վերջինս չպետք է հայտնաբերեր պայմանագիրը կնքելիս, գույքը գննելիս կամ դրա սարքինությունն ստուգելիս.
- 3) վարձատուն վարձակալության պայմանագրով սահմանված ժամկետներում, իսկ պայմանագրում դրանց բացակայության դեպքում՝ ողջամիտ ժամկետում, չի կատարել գույքի հիմնական վերանորոգման իր պարտականությունը.
- 4) հանգամանքների բերումով, որոնց համար վարձակալը պատասխանատու չէ, գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

4.3. Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ /վաղաժամկետ/ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նախապես մեկ ամիս առաջ գրավոր կերպով միմյանց տեղյակ պահելով:

#### **5. ԱՆՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻ ՈՒԺ ԱՉԴՅՈՒԹՅՈՒՆԸ (Ֆորս-մաժոր)**

5.1. Կողմերն ազատվում են սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները մասնակի կամ լրիվ չկատարելու համար նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարումը հանդիսացել է այնպիսի հանգամանքների հետևանք, որոնք կողմը հնարավոր բոլոր միջոցներով չէր կարող ոչ կանխատեսել և ոչ էլ կանխել: Այդպիսի հանգամանքներ են տարերային աղետները, ռազմական գործողությունները, քաղաքական հուզումները: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է վեց ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

#### **6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ**

- 6.1. Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը կնքվում է անորոշ ժամկետով:
- 6.2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն պայմանագրի պայմանները գործում են 05/10/2022 թվականից:

#### **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

- 7.1. Վարձատուի ներկայացուցիչը երաշխավորում է, որ Վարձատուն ամբողջությամբ և միանշանակ օգտվում է տարածքի սեփականության իրավունքից և որ նա կարող է օրինական կերպով տալ տարածքը վարձակալության և Վարձակալին տրամադրել այն իրավունքները, որոնք նախատեսված են սույն վարձակալության պայմանագրով:
- 7.2. Ցուրաքանչյուր կողմ պարտավորվում է կատարել մյուս կողմի խնդրած պատճառաբանված քայլերը տվյալ պայմանագրում նշված կողմերի մտադրությունների իրականացման նպատակով:
- 7.3. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:
- 7.4. Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7.5. Համաձայն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 24 հոդվածի՝ սույն վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում և ուժի մեջ են մտնում այդ պահից:
